Հակահայկական ռասիզմն Ադրբեջանում և բռնությունների մոդելավորումը Սումգայիթում ըստ զոհերի և ականատեսների վկայությունների

Բոլոր հակամարտությունների գոտիներում փախստականները զոհեր են: Ես բոլորովին չեմ ուզում համեմատել փախստականների մի խումբը մեկ այլ խմբի հետ: Հակամարտող բոլոր խմբերից մարդիկ, խաղաղ բնակչությունը եթե փախչում է՝ նա զոհ է: Մարդիկ մի դեպքում փախչում են բռնության վախից՝ խուսափելով բռնությունից, այլ դեպքերում՝ սպառնացող բռնությունից, եթե, իհարկե, կարողանում են փախչել, երրորդ դեպքում՝ արդեն իրականացված բռնության պատճառով՝ եթե փրկվում են: Բոլոր փախստականները զոհեր են, սակայն զանազան պատճառներով փախստականների տարբեր խմբերի նկատմամբ ուշադրությունը տարբեր է,-մի դեպքում քաղաքական է, այլ դեպքերում՝ մարդասիրական, սակայն կան նաև բոլորովին անուշադրության մատնված փախստականներ: Ադրբեջանահայ փախստականները հենց այս խումբն են, նրանց «մոռացել» են. մոռացել է թե այսպես կոչված միջազգային հանրությունը, թե միջազգային կառույցերը, թե միջազգային այն խումբը, որը ձևավորվել է հայ-ադրբեջանական կոնֆլիկտը կարգավորելու նպատակով և, թվում էր, նրանց պրոբլեմի քննարկումը այս խմբի ուղղակի պարտականությունն է:

Ադրբեջանահայ փախստականների նկատմամբ առնվազն տարօրինակ այս անտարբերությունը նոր երևույթ չէ: Ուղիղ 35 տարի առաջ Ադրբեջանի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղի մարզի հայ բնակչությունը, ԽՍՀՄ և միջազգային բոլոր իրավական նորմերի շրջանակներում որոշում ընդունեց անկախանալ Ադրբեջանից, ինչն առիթ դարձավ, որ Ադրբեջանի իշխանությունները վիթխարի ծավալների և սարսափելի ագրեսիվ գործողություններ սկսեին Ադրբեջանի տարածքում՝ քաղաքներում և գյուղերում ապրող, Ադրբեջանի քաղաքացիներ հանդիսացող ամբողջ հայ բնակչության դեմ: Լեռնային Ղարաբաղի անկախության ինքնորոշման թանաքը թղթի վրա դեռ չէր չորացել, երբ Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում 1988թ. փետրվարի 26-ին բառի բուն իմաստով գրոհ սկսվեց քաղաքի հայ բնակիչների դեմ՝ սարսափելի բռնություններով, սպանություններով, հրկիզումներով, բնակարանների թալանով և ագրեսորների ատելության սոսկալի դրսևորումներով: Իշխանությունների ուղղակի խրախուսմամբ Սումգայիթում շարունակվող անպատիժ ագրեսիայի երեք օրերի ընթացքում, զարմանալիորեն արագ մոդելավորվեցին ակտիվ ռասիզմի բոլոր դասական դրսևորումները, որոնք հետագա երկու տարիների ընթացքում շարունակվեցին Ադրբեջանի ողջ տարածքում՝ «մահ հայերին» կարգախոսով, և իրենց կուլմինացիային հասան 1990թ. Հունվարին՝ Բաքու քաղաքումև 1992թ.՝ Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում: Այդ չորս տարիների ընթացքում հայերի բացարձակ մեծամասնութունը այս կամ այն ձևով փախավ Ադրբեջանից:

1989թ. Բաքու քաղաքում դանդաղ հասունանում էր երկրորդ Սումգայիթը: Դեռևս ԽՍՀՄ էր, ուրեմն նաև՝ տեղեկությունների լուր գրաքննություն: Միայն Բաքվից տեղափոխվող հայերի միջոցով էր հնարավոր լինում որոշ տեղեկություններ ստանալ, թե ինչ է կատարվում քաղաքում: /բերել օրինակներ/ 1990թ. հունվարին «Բաքուն պայթեց»:

1990թ. հունվարի 13-ին, Նոր տարվա տոներից անմիջապես հետո Բաքվում սկսվեց դեռևս մնացած հայերի բնաջնջման ծրագիր: Մեկ շաբաթ տևած ագրեսիայի այդ «խրախճանքի» ընթացքում Ադրբեջանում հայերի համար փակվեցին ելքի բոլոր դռները՝ գնացքները, օդանավակայանը, ավտոմոբիլային ճանապարհները, նավահանգիստը, մի խոսքով՝ Ադրբեջանից փախչելու բոլոր հնարավոր ուղիները:

Քաղաքում մնացած հայերի բնակարանների հասցեները գտնվում էին ագրեսորների ձեռքին, տներից փախած հայերին որսում էին փողոցներում, ոստիկանությունը չէր պատասխանում պաշտպանություն խնդրող հայերի դիմումներին, սրտացավ հարևանների մի մասը վախենում էր ընդունել նրանց, հիվանդանոցները մի կողմից չէին ընդունում վիրավորներին, մյուս կողմից հայերն իրենք էին վախենում հիվանդանոց գնալ: Հայերի նկատմամբ կույր ատելության ալիքը ներառել էր նաև դպրոցները. ուսուցիչների մի մասը դպրոցների աշակերտների մեջ ակտիվորեն ատելություն էր բորբոքում իրենց հայ ընկերների նկատմամբ: Այդ դժոխքից փախած հայ աշակերտները հետագայում Հայաստանում պիտի պատմեին, որ ադրբեջանցի հորից և հայ մորից ծնված իրենց 14 տարեկան դասընկերը հայերի նկատմամբ ատելության մթնոլորտում, ֆանատ «հայրենասիրության» մղումներով սպանել է իր մորը:

1990թ. հունվարի 13-ին սկսված այս «վակխանալիայի» ընթացքում զարմանալի, տարօրինակ բաներ էին կատարվում ԽՍՀՄ և Ադրբեջանական իշխանության վերին օղակներում: Նրանք քննարկում էին ստեղծված իրավիճակը: Քննարկում էին՝ փաստացի ոչինչ չձեռնարկելով: Ինչի՞ն էին նրանք սպասում: Ադրբեջանի իշխանությունների քթի տակ իրականացվող սպանդը մանրամասնորեն հայտնի էր նաև ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին: Դա գիտեին բոլորը: Ավելի ուշ, 1997թ. այդ մասին Ն.Ռիժկովը «հուշեր» պիտի գրի: 1997թ. հունվարի 13-ին, Բաքվի հայկական սարսափելի ջարդերի սկզբից ուղիղ 15 տարի հետո, Ն.Ռիժկովը գրում է. «*Մարդիկ զոհվում էին, Բաքուն համակվել էր արտասովոր դաժանությամբ... Սկսեցին լուրեր գալ մարդկանց նկատմամբ անհավատալի բռնությունների մասին: Իր իրերը գնացքով ուղարկելու նպատակով պահասենյակում տեղավորող մի հայի փակել էին պահասենյակում և կենդանի այրել: Հինգերորդ հարկի պատուհանից նախ կնոջ աչքի առաջ դուրս էին նետել ամուսնուն, ապա՝ կնոջը: Նույնիսկ հիմա այդ մասին դժվար է խոսել...*»[1]:

Հունվարի 15-ին Մոսկվայում ԽՍՀՄ Կենտրոնական Կոմիտեի հրավիրած Քաղբյուրոյի նիստում ԽՍՀՄ ամենաբարձրաստիճան անձիք քննարկվում են ստեղծված իրավիճակը: Ն.Ռիժկովը շարունակում է հիշել. «Առաջարկվեց արտակարգ իրավիճակ մտցնել Բաքվում և հանրապետության մի քանի շրջաններում: Բայց դրա դեմ կատեգորիկ ըմբոստացավ Ադրբեջանի Գերագույն Խորհրդի նախագահ Կաֆարովան: Այն հարցին, թե կկարողանա՞ արդյոք Ադրբեջանի հանրապետության ղեկավարությունը երաշխավորել քաղաքացիների անվտանգությունը և քաղաքում կարգը վերականգնել՝ նա չկարողացավ որևէ հասկանալի պատասխան տալ: Ակնհայտ էր, որ նա որևէ տրամաբանական ասելիք չունի»: Եվ ի՞նչ է որոշում այդ ամենից հետո ԽՍՀՄ կառավարման բարձրագույն մարմինը: Ն.Ռիժկովը գրում է. «*Նույն օրը, ուշ երկոյան, հաշվի առնելով Կաֆարովայի առարկությունները և Գորբաչովի խուսանավումները, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը որոշում է... արտակարգ իրավիճակ հայտարարել ոչ թե Բաքվում, որտեղ առատորեն հոսում էր մարդային արյունը, այլ Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանի ու Հայաստանի որոշ շրջաններում*»: Ինչու՞: Այս հարցականը տարածվում է նաև 1992թ. Ադրբեջանի կազմում գտնվող Շահումյան հայկական շրջանի դեռևս Ադրբեջանում մնացած և Լեռնային Ղարաբաղի հյուսիսի հայկական գյուղերի նկատմամբ իրականացված «Օպերացիա կոլցո» անվամբ հայտնի գործողությանը /Ադրբեջանի ոստիկանության հատուկ զինված խմբի օգնությամբ Ադրբեջանում մնացած վերջին հայերին բռնությամբ վտարելու գործողությունը/, և մինչև այսօր ադրբեջանահայ փախստականների պրոբլեմների հանդեպ Ռուսաստանի և Միջազգային կառույցների քար լռությունը:

Ինչու՞ ԽՍՀՄ տարածքում առաջին, իր բնույթով չափազանց ագրեսիվ ռասիզմի հետևանքով առաջացած էթնիկական սպանդից ազատված փախստականության խնդիրը չի դարձել ո՛չ հասարակական, ո՛չ քաղաքական կառույցների քննարկման խնդիր:

Վերադառնանք, սակայն, դեպքերի զարգացումներին: Ո՛չ ԽՍՀՄ, ո՛չ Բաքվի իշխանությունները չօգնեցին նախ՝ Սումգայիթում, ապա՝ ողջ Ադրբեջանում ծավալված ռասիզմի զոհերին՝ հայերին: Մինչև 1990թ. հունվարի 19-ը, երբ արդեն Բաքվում հայ չկար, հայորսության դուրս եկած «դեմոկրատները» վերջապես «հիշեցին», որ իրենց «դեմոկրատական» պահանջների թիրախը Ադրբեջանի իշխանություններն են, և շրջափակեցին իշխանության ինստիտուտները: Ն.Ռիժկովը սրտի մեծ ցավով գրում է. «*19-ի առավոտյան... Բաքվում տեղի ունեցավ ողբերգություն-հանրապետությունում իշխանություն չկար: Առավոտյան զինված գրոհայինները շրջափակեցին Մինիստրների խորհրդի, Գերագույն Խորհրդի և Կենտրոնական Կոմիտեի շենքերը: Իրադրությունը ճնաժամային էր: Իրավիճակը չէր վերահսկվում: Պետք էր միջոցներ ձեռնարկել*»,- և վերջապես Բաքու է մտնում զորքը: Նույնիսկ 15 տարի հետո Ն.Ռիժկովի համար ողբերգությունը ոչ թե բուն ռասիզմն էր, ոչ թե ահռելի թվով մարդկանց վերափոխումն էր գազանի, ոչ թե այդ գազանացած ամբոխի իրականացրած ոճիրն էր, այլ... իշխանությանը սպառնացող վտանգը:

Արդյունքում 1988թ. փետրվարից իշխանության փաստացի հովանավորությամբ սկսված ջարդերի, թալանի, բռնությունների, սպանությունների հետևանքով խաղաղ ժամանակ, առանց պատերազմական իրավիճակի, ադրբեջանահայերի փրկված մասը դառնում է փախստական. / 20-րդ դարի երկրորդ կեսում Արևելյան Եվրոպայի տարածքում այս առաջին փախստականության պատճառներն ու հետագա ճակատագիրը այդպես էլ չի դառնում ոչ միջազգային կառույցների, ոչ էլ՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ զարգացած իրավիճակը լուծելուն միտված քաղաքական մարմնի՝ ԵԱՀԿ շրջանակներում ձևավորված Մինսկի խմբի քննարկումների հարց: Մինսկի խմբում Ղարաբաղի խնդրի շուրջ ստեղծված իրավիճակի քննարկումների թեմայի մեկնարկային կետը 1993թ.-ից հետոն է, սակայն այդ խումբն, այնուամենայիվ, քննարկում է մինչև 1993թ. պատերազմական իրավիճակի թելադրանքով առաջացած ադրբեջանցի փախստականների պրոբլեմը և լուծման ուղիներ է որոնում փախստականների այդ խմբի համար, բայց համառորեն շրջանցում է այդ պատերազմը հրահրած ադրբեջանական ռասիզմի վայրագության հետևանքով առաջացած հայ փախստականների պրոբլեմը, ինչը, մեղմ ասած, անհասկանալի է:

«ԻՆՉՔԱՆ ՇԱՏ ԱՐՅՈՒՆ, ԱՅՆՔԱՆ ԱՄՈՒՐ ԱԶԳ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

Այս ֆորմուլայի հեղինակն Ադրբեջանի ժողովրդավարական ուժերի առաջնորդ, տխրահռչակ «Նարոդնի ֆրոնտի» ղեկավար Աբուլֆազ Էլչիբեյն է: Ֆորմուլան, անշուշտ, հնչել է հենց արյունահոսության, որին ավելի ճիշտ կլինի անվանել «արյունահեղություն», ակտիվ շրջանում, հաստատելու համար Նարոդնի ֆրոնտի իրավացիությունը, այն է՝ արյունահեղությունն Ադրբեջանում ինքնանպատակ չէ, այն ուղղված է սրբազան նպատակի իրականացմանը, սրբազան նպատակ, որի անունն ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ է: Աբուլֆազ Էլչիբեյն այն ձևակերպել է, եթե հավատանք 1989թ. Ադրբեջանի Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Վագիֆ Հուսեյինովին, վերջինիս հետ զրույցի ժամանակ. «1989թ. հոկտեմբերին ես հանդիպեցի Ազգայն ճակատի առաջնորդներ, Ադրբեջանի ապագա նախագահ Աբուլֆազ Էլչիբեյին և Էհթիբար Մամեդովին: Այն ժամանակ ես նրանց հարցրի. «Ինչու՞ դուք չեք ուզում գնալ Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի ազգային ճակատների ճանապարհով: Դուք նույնպես կարող եք Սահմանադրության և գործող օրենքների շրջանակներում

ընտրվել Գերագույն Խորհուրդ»: Նրանք պատասխանեցին, որ իբրև թե յուրաքանչյուր երկիր ունի իր առանձնահատկությունը: «*Եվ առհասարակ ազատությունն առանց արյան չի նվաճվում: Այո, մենք գիտենք, որ զոհեր կլինեն: Բայց այդ զոհերը կլինեն հանուն ազատության*»: Ես բացականչեցի. «*Դուք ձեր վրա պատասխանատվությո՞ն եք վերցնում ապագա զոհերի համար: Դուք գիտակցաբա՞ր եք մարդկանց արյունահեղության մղում*»: «*Այո, մենք գտնում ենք, որ ինչքան շատ արյուն հոսի, այնքան կամրապնդվի ազգի ամրությունն ու գաղափարախոսությունը*»,-այսպիսին էր պատասխանը»,-2004թ. “Московский комсомолец”-ի թղթակից Միխայիլ Ռոստովսկու հետ հարցազրույցի ժամանակ պատմել է 1989թ. Ադրբեջանի Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Վագիֆ Հուսեյնովը[2]: Ադրբեջանի «Նարոդնի ֆրոնտի» ղեկավարներ Աբուլֆազ Էլչիբեյի և Էհթիբար Մամեդովի հետ Վագիֆ Հուսեյնովը զրուցել է 1989 թ., երբ արդեն տեղի էր ունեցել սումգայիթյան արյունահեղությունը, ողջ Ադրբեջանում գործում էր հայերին ջարդելու, սպանելու, կոտորելու ուրվականի «հարություն առած», կենդանացած ծրագիրը և դեռ առջևում էր 1990թ. հունվարը՝ Բաքվի հայերի սարսափելի ջարդերի և 1992թ. Շահումյանի շրջանի ու Գետաշենի հայերի բռնի դեպորտացիայի շրջաններն էին: Արդյո՞ք այս արյունը նկատի ունեին Ադրբեջանի Ժողովրդական ճակատի առաջնորդները:

Սումգայիթյան ջարդերի ժամանակ Ադրբեջանի գլխավոր դատախազ Իլյաս Իսմայիլովն իր հերթին 2003թ. փետրվարին ասում է, որ «Սումգայիթում մարդկանց ջարդերի հրահրողներն այս պահին իրենց գրպաններում պատգամավորական մանդատներ ունեն և նստում են Միլլի Մեջլիսում»[3].

Չխոսելով սույն հայտարարություններից բխող այլևալ հարցերի, մասնավորապես այն մասին, որ Ադրբեջանի պետական անվտանգության նախագահը առնվազն 1989թ. անհերքելիորեն գիտեր, որ «նարոդնի ֆրոնտի» ծրագիրը արյունահեղությունն է երկրում և ոչինչ չձեռնարկեց այն կասեցնելու համար, իսկ գլխավոր դատախազը ճանաչում էր սումգայիթյան ջարդերը հրահրողներին[4], առանձնացնենք Վագիֆ Հուսեյնովի հիշողությամբ վերարտադրված զրույցի առանցքային մի քանի հարցադրումներ.

Առաջինը նպատակն է,-ընդհանուր առմամբ Աբուլֆազ Էլչիբեյը և Էհթիբար Մամեդովը Վագիֆ Հուսեյնովի հետ զրուցելիս խոսում են «ազատության նվաճման» մասին, և մնում է ենթադրություն անել, թե ի՞նչ ազատության և ու՞մից ազատության մասին է խոսքը: Կոմունիստների՞ց /հասարակարգի փոփոխություն/, Ռուսաստանի՞ց /Ադրբեջանի անկախություն/... Ստորև դեռևս կդիտարկենք «Նարոդնի ֆրոնտի» գործողությունները, նրա կողմից կիրառված կարգախոսները և դրանց կապը «ազատության» գաղափարի հետ;

Երկրորդը նպատակին հասնելու միջոցն է,- «*Ազատությունն առանց արյան չի նվաճվում... զոհեր կլինեն...* «,-ստորև կդիտարկենք արյան և զոհի խնդիրը;

Երրորդը օգտագործվող միջոցներից ակնկալվող հետևանքներն են,- «ինչքան շատ արյուն հոսի, այնքան կամրանա ազգի ամրությունը /мужество/ և գաղափարախոսությունը»,-ստորև կդիտարկվի ադրբեջանական էթնիկ գաղափարախոսության ձևակերպումը և ազգի ամրության նվաճումը:

«Նարոդնի ֆրոնտի» գործունեության ժամանակաշրջանն Ադրբեջանում որպես հասարակական շարժում, հավանաբար կարելի է թվագրել 1988թ. սկզբներից. այն զուգահեռվեց Հայաստանում նույն թվականի հունվարյան ժողովրդական շարժմանը: Նրա վերաճումը քաղաքական շարժման,

թերևս, 1988-1991 թվականներն էին: Դիտարկենք «Նարոդնի ֆրոնտի» հասարակական-քաղաքական «հասունացումը» այդ տարիների Նարոդնի ֆրոնտի գործունեությամբ և Ադրբեջանում ծավալված դրամատիկական, հաճախ՝ հանցագործ իրադարձություններով ու դրանց հետևանքներով:

Սույն հոդվածում խնդիրը քննարկվում է բացառապես, կամ՝ համարյա բացառապես ադրբեջանահայ փախստականների՝ 1988-1990թթ. Ադրբեջանում ապրելու շրջանի հիշողությունների պատմությունների վերլուծությունով: Ընդհանուր առմամբ Բաքվի, Սումգայիթի, Կիրովաբադի, Վարդաշենի, Շաքիի, Իսմայիլի, Շամխորի, Եվլախի շրջանների, Նախիջևանի ինքնավար մարզի ավելի քան հարյուր փախստական հայ ընտանիքների պատմությունները գրանցվել են 2006թ. ընթացքում: Այդ պատմությունները վերաբերում են նրանց կյանքի տարբեր խնդիրների, սակայն սույն հոդվածում օգտագործվել են բացառապես «Նարոդնի ֆրոնտի» գործողություններին և դրա նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների վերաբերմունքին առնչվող նյութերի մի մասը: Պատմությունները ձայնագրվել են և տեքստավորվել: Բոլոր նյութերը՝ ձայնագրություններն ու դրանց տեքստերը պահվում են հոդվածի հեղինակ Հ.Խառատյանի անձնականև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվներում:

Հասկանալի է, որ այս վերլուծությունը հավակնություն չունի գնահատել «Նարոդնի ֆրոնտի» և Ադրբեջանի իշխանությունների ողջ գործունեությունը:

«ՄԱՀ ՀԱՅԵՐԻՆ», «ՀԱՅԵՐ, ՌԱԴ ԵՂԵՔ»

1988թ. հունվարի վերջերից Բաքվում արդեն հրապարակային միտինգներ կային, որոնցում հավաքված ները դեմ էին արտահայտվում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի կիրառմանը գլխավորա պես «Ղարաբաղը մերն է», «Ղարաբաղը չենք տա» կարգախոսերով:

Ադրբեջանահայերը, այդ թվում՝ բաքվահայերը, սակայն, դեռևս հստակ չգիտեին, թե խոսքն ինչի մասի ն է և ինչ է կատարվում երկրում: Զանգվածային լրատվամիջոցները խորհրդային ավանդույթով համեր աշխ լռություն էին պահպանում և հայերը վստահ էին, որ Ղարաբաղի հայերի կողմից բարձրացված հա րցը իշխանությունների լուծելիք հարցն է, իրենք որևէ առնչություն չունեն Ղարաբաղի ինքնորոշման հե տ[5]:

Փետրվարի 26ին Սումգայիթի քաղաքային կոմիտեի մոտ հավաքված սումգայիթյան առաջին միտինգն անակնկալ էր գոնե հայերի համար, չնայած նյութերը վկայում են, որ այն խնամքով նախապատրաստված էր: Միտինգում բարձարախոսներով հայտարարվեց, որ Հ այաստանում անլուր բռնությունների են ենթարկվում ադրբեջանցիները, բռնաբարվում են կանայք ու ա ղջիկները, կտրվում են երեխաների գլուխները[6]: Այս պատմություններով միտինգի կարգադրիչները գրգռում էին հավաքվածներին՝ պահանջելով վրեժ լուծել ադրբեջանահայերին «արժանի» հակահարվածտալով: Հայերի շատ չնչին մասը միայն տեսավ այդ միտինգը, միանգամայն պատահաբ ար: Զարմանալի էր, որ միտինգի հիմնական կարգախոսերը միանգամից հայերի սպանության պահան ջ էր. այն սկսվեց «Մահ հայերին», «Հայեր, ռադ եղեք» կարգախոսով՝ որպես կոչ, բայց նաև՝ որպես գործողությունների ծրագիր: «…Թուրքեր[7], դուք ի՞նչ ժողովորդ եք, մեր թուրքերին տես Հայաստանում ի՞նչ են անում, կոտորում են, դուք հանգիստ նստել եք… Այդտեղ էր իրանց քաղաքային կոմետի երկրորդ քարտուղար էր, անունն արդեն մոռացել եմ, բայց կին էր, գոռում էր. «Գնացեք տեսեք, - ասում էր,- մի մեքենա լրիվ թուրքի գլուխ է կտրած լցրած: Դուք այստեղ հանգիստ կանգնել եք, չպիտի քաղաքում մի հատ հայ մնա… Տեսնում եմ էդ փողոցով, ըը, էնքան ժողովուրդ, էնքան ժողովուրդ:

Ուրեմն խումբ-խումբ, էս մեկը մի տեխնիկում ա, մյուսը՝ մի, տարբեր խմբեր, գոռգոռալով գնում են: Դրանց առջևում մի մարդ էր, երևում էր, որ կամ դասատու ա, կամ ինչ որ նման բան, դրոշը ձեռքին, էդ դրոշի վրա էլ ըսենց կիսալուսին ա, մեջտեղը աստղ ա, ինչ ա… »[1], – պատմում է սումգայիթցի Էմմա Սարգսյանը /Սումգայիթի հասցեն՝ Լենինի փողոց, շենք 16, բնակարան 14/, որի աչքի առաջ սպանել էին իր հարևան երկու երիտասարդ եղբայրների և դիակներն այրել, սպանել էին դիմացի շենքի մի տարեց հայի՝ սառնարանը վրան դնելով, իսկ ավելի ուշ իմացել է իր ամուսնու սպանության մասին: «Մութը որ ընկավ, ա~… ա~… սկսեցին էլ խանութ, էլ կրպակ, էլ ինչ, ջարդում են, փշրում են: Հաջորդ օրը… որ մթնեց, սկսեցին մեր թաղամասում ինչքան հայի տներ կա, մտնում են իրերը թափում են փողոցը, տան իրերը…**միլիցեքն էլ կանգնած ոչ մի խոսք, ոչ մի բառ: Մի անգամ ասեն, «խի՞ եք ըդենց անում», կամ…**Մի հատ մեծահասակ մարդ էլ, ուրեմն էս մեր շենքն ա, էս էլ՝ էս մի շենքն ա, արանքում փողոց ա: Էդ շենքից թափեցին, թափեցին եղածը, վերջումն էլ սառնարանը դրին մի մարդու, էդ մարդին խփել են ընկել ա, սառնարանը դրին վրեն: Ընենց ա գոռում, ընենց ա գոռում: Հայ էր: Անունը չեմ իմանում, /չէ, հարևանը չէր/ դե փողոցի էն կողմն էր… Հետո էս շենքից պրծան, էս բնակարանից պրծան, մտան մի ուրիշ բնակարան, էլի հայի բնակարան ա: Դրանք էլ թափեցին**: Էդ միլիցեքը հայաթից գոռում են հիմա. «Ինչի՞ չեք վառում իրերը, ինչի՞ չեք վառում»:** Ես էլ պատուհանից նայում եմ…էրկու ախպեր սպանեցին մեր բակում: Անունները դրանց գիտեմ, որովհետև իմ երեխաների ընկերներն են, մեկը՝ Ավանեսյան Ալբերտ ա, մեկն էլ Ավանեսյան ոնց որ Վալերիկ էր…Դրանց սպանել են: Ես տեսա: Ես դա տեսա: Ուրեմն մտել են դրանց տուն, կլինեն մի երկու հարյուր հոգի ջահելներ: Դուռը ջարդել են, մտել ներս: Տունն էլ հարուստ էր, ապրանք կար մեջը: Տղաներից մեկը փախավ, էն մեկին բռնեցին: Էն մեկին բռնեցին ու…սպանեցին, կացնով խփեցին, սպանեցին հենց բակում: Էդ մեկն ընկավ, մյուսի հետևից վազեցին, էդ էլ բռնեցին, բերին: Դրան էլ սպանեցին…Գիշեր էր արդեն, ժամը մեկն էր, ամուսինս էլ չէր եկել: Ես իջա բակ: Մեր վերևի հարևանի տղան, երիտասարդ մի տղա է, իջավ, ասում է «մորաքույր, ի՞նչ ես եկել ստեղ, գնա տուն, կգան քեզ կսպանեն»: Ասեցի «բա, Շահենը /ամուսինը/ դեռ չի եկել աշխատանքից»: Ասեց «Դու գնա տուն, քեզ էս որպեիս սպանելու են»: Ինքը ասեց ու գնաց էն տղոց մոտ, ում սպանել են: Գնաց, ուրեմն սենց օջախ են վառել դրանք, էն չոփերը, չոփերը հավաքել վառել են: Կրակ են վառել, որ դիակը վառվի: Գնաց էդ սպանվածների մոտ, դե երեխեք են եղել էն ժամանակ, ինչ էին իմանում հայը ինչ ա, թուրքը ինչ ա, միասին խաղացել են էլի: Ուզում ա հանգցնի կրակը, էդ թուրքերից մեկը գոռաց, ասեց «Էս որպեիս քո դիակն էլ կդնեմ դրա կողը, հանգցնում ես, որ չվառվի՞»: Վերջը էդ տղան վախելուց, ջանը քաղցր ա, էդ տղան վախելուց եկավ, եկավ ինձ ասեց «գնա տուն, դու գնա մեր տուն», Էմմա Սարգսյանին որդու հետ պատսպարում են Սումգայիթի «Շտապ օգնության» հիվանդանոցում, որտեղ ինքն աշխատում էր. «Գիշերը ինչ էին անում, վաաա~~յ…հիվանդանոցում: Եկել էդպես շրջապատել են, դուրսը շարվել՝ շըխկ, շըխկ…ուզում են ջարդել մտնեն, որ տեսնեն ներսում հայ կա՞: Բժիշկներն ասում են «այ մարդ, հայ չկա այստեղ, հայ որտեղի՞ց է»: «Չէ, -ասում են,- պիտի մենք մտնենք տեսնենք, եթե չկա,- ասում են, -կթողնենք կգնանք: Հիմա գնում ենք մորգը վառենք, որ էդ դիակները սաղ վառվեն ընդեղ»:

Սումգայիթցի այս տիկնոջ պատմությունից բխում է, որ ձևավորվող «Նարոդնի ֆրոնտի» բարձրաձայն ձևակերպված գլխավոր գաղափարը «ազգի պատիվը բարձր պահելն էր՝ վրեժ հանելով մուսուլմաններին /իմա՝ ադրբեջանցիներին/ հալածած հայերից»: Սումգայիթի բռնարարքների բազմաթիվ զոհեր այս երևույթը հաստատում են իրենց պատմություններով: Սումգայիթից փախստական հայերի հիշողություններում որևէ հետք չկա Ղարաբաղի կամ ազատության հիշատակության վերաբերյալ[8]:

Փետրվարի 26-ին քաղաքում մոլեգնած սպանությունների ու թալանի ալիքը որևէ արձագանք չգտավ քաղաքային իշխանությունների կողմից: Որևէ հայտարարություն, կամ՝ զգուշանալու կոչ, կամ՝ հայերին պաշտպանելու որևէ միջոցառում այդպես էլ չեղավ: Փետրվարի 27-ին շատ հայեր դեռ չգիտեին իրենց սպառնացող վտանգը: Սումգայիթի 3-րդ միկրոշրջանի տուն 5, բն. 45-ի բնակիչ Վալյա Շագայանցը պատմում է. «Տանն էինք, կիրակի էր, փետրվարի 27-ը: Տեսնում ենք՝ փողոցում միտինգ է, վազվզում են թուրքերը և գոռում են. «հայերը, հայերը»: Ի՞նչ է պատահել՝ չենք հասկանում: Մեր շենքի բակում էլ վրան էր խփած, մահացած մի հայի քառասունքն էր: Վերևից՝ պատուհանից տեսնում ենք՝ վրանը վառում են, գոռգոռոցներն ենք լսում. «Հայաստանում մեր կանանց բռնաբարում են, կրծքերն են կտրում»: Մտան շենքը, հայերի տները՝ թալանում են, ջարդում… Հասան մեր տանը, մի 100 հոգի երևի մտել էին. երեքսենյականոց բնակարանի մեջ տեղ չկար. սաղ տղամարդիկ՝ էլ ջահել, էլ հասակով, էլ երեխա՝ տարբեր տարիքի կար… Մտան, սկսեցին ջադուփշուր անել… Երբ որ դուռը ջարդում էին, հենց ամուսինս բացեց, մի թուրք ասեց՝ ժամացույցդ հանի, ոսկի ա՞… Մի խումբը գողությունով ա զբաղվել, մի խումբը՝ բռնաբարությունով. տարբեր խմբերի մարդիկ են եղել՝ արմատուրայով, բանով՝ ոնց որ կազմակերպած գործ… Մեր շենքն էլ հայի շենք էր՝ առաջինից մինչև չորրորդ հարկը լրիվ հայ ընտանիքներ էին, վերջին ընտանիքը մերն էր: Մյուսներինն արդեն լրիվ քանդել էին, մեկը ցույց տվեց, որ մի ընտանիք մնացել է, վերջը եկան, մեզ վրա էլ հարձակվեցին: Թուրքերն էին ցույց տվողները, շատ հնարավոր է՝ հարևանները… Ես, Քրիստիկս՝ 7 տարեկան, տղես՝ 4 տարեկան, մի կտոր հաց եմ տվել, մտել զգեստապահարանը… տեգորս կինն էլ Ռուսաստանից էր եկել, նա էլ մտել էր փոքրիկ մառանը: Արդեն լսում ենք, որ կռիվ ա գնում տան մեջ; Ես մտածեցի, որ պետք է դուրս գանք, թե չէ պահարանի մեջ կսպանեն: Ես երեխեքիս վերցրի, դուրս եկա, տեգորս կինն էլ՝ երեխան գրկին, նույնպես դուրս եկավ: Լեզուն վախից կուլ էր գնացել, չէր կարողանում խոսել: Նա շատ սիրուն աղջիկ է, կապույտ աչքերով: Ես թուրքերեն խոսում եմ, ասացի, որ նա Ռուսաստանից է եկել: Ասում են «ռուս է՞»: Խաբեցի, ասացի՝ հա: Ես իրանց հետ խոսում եմ ու զարմանում եմ, թե ո՞նց ես էդ պահին չէի լացում: Էդ ում հետ որ խոսում էի՝ տեսավ, որ մյուսները պահարաններն են դատարկում, երևի ոսկեղեն կամ փող էին փնտրում, գնաց դրանց կողմն ու հենց այդ պահին ներքևի հարկի հարևանուհուս տեսա: Մոտեցավ էդ աղջիկն ինձ, կամաց ասեց «սուս, չխոսես, ես Քրիստիկին տարել եմ մեր տուն, շուտ դուք էլ իջեք մեր տուն»: Նոր տեսա, որ Քրիստիկս մոտս չի: Մեր հարևանուհի Խանումն այդպես մեզ փրկեց, կարծեմ թալիշ էր: Մեր շենքի առաջին հարկում թալիշներ էին ապրում Լենքորանից, բայց խանումը երկրորդ հարկից էր: 15 հոգի հայ Խանումն իր տունը պահել էր… Բայց կիսուրս մահճակալի տակ է եղել, չենք իմացել…Կեսարիս քույրը Կիրովաբադից էր եկել, իրան էլ են ծեծել… Գոնե կիսուրս մահճակալի տակից ոտքս բռներ, որ ես իմանայի, որ ինքն այնտեղ է, գոնե փրկեինք: Մենք արդեն տնից դուրս ենք եկել, մի մահճակալի տակ կեսարիս քույրն էր, մյուսի՝ կիսուրս, թե մեզնից հետո ի՞նչ են արել… Կիսուրիս դաժան սպանել են… Կեսարիս ու իրա քրոջը շատ են ծեծել, փողոցում մերկացրել են ու ծեծել: Կեսարիս ու իրա քրոջը ահավոր են ծեծել… ամեն ինչով ծեծել են… Քույր ու եղբայր հետո երեք տարի ապրեցին, էդ ծեծից հետո: Մենք այդ ընթացքում երկրորդ հարկի Խանումի տանը թաքնված էինք: Դուրս եկան բակ, ծեծեցին, սպանեցին, ջարդեցին, հետո քառասունքի համար դրված սեղանի շուրջն սկսեցին քեֆ անել: Երգում են «ջու, ջու, ճուտիկներս»: Քեֆ են անում թուրքերը, մենք էլ 15 հոգով 2-րդ հարկն ենք, Խանումն ասում է՝ չխոսեք, հանկարծ ձեններդ չլսեն, կգան բոլորիդ կսպանեն… Հարևանի աղջկան, ինքն է եկել, պատմել, բռնաբարել են, դանակով խփել են: Ես եմ իրեն օգնել, վիրակապ դրել: Էդ աղջկա անունը, որ բռնաբարել էին, չգիտեմ, ինքը մեր հարևանի տուն Բաքվից հյուր էր եկել: Մեր հարևանի անունը՝ Ավանեսյան Իրա, Ավանեսյան Ժաննա: Իրենց տուն հյուր էր եկել: Իրային ու Ժաննային էլ էին մերկացրել, բակում, փողոցում վազացնում էին այդ մերկ աղջիկներին ու հետևից խփելով ծիծաղում էին: Մեր հարևանուհին Իրային էլ բերեց մեր մոտ, տկլոր էր, կիսուրիս շորը տվել եմ, որ էդ աղջիկը հագնի… էն մի քույրն էլ մտել էր նկուղը, դե փետրվար

ամիսն էր, ցուրտ էր, երևի թուրքերն ասում էին «մեկ է, այնտեղ կսատկի, ցուրտ է, իսկ նա մերկ է»: Բայց փրկվել էր, կարողացել էր իր հորեղբոր տուն հասնել: Իրան ու Ժաննան հիմա Բուդյոննովսկում են, Ռուսատանում: Մենք 15 հոգի հավաքվել էինք մի սենյակի մեջ, էդ մեր հարևանը եկավ, ասեց՝ վայ, վայ, Վալյա, կիսուրիդ տանում են, չեմ կարա փրկեմ, ինձ էլ կսպանեն: Մնացինք այդ տանը, մինչև զինվորները եկան, մեզ տարան: 7 տարեկան աղջկաս մազերն անմիջապես սպիտակել էին: Հիմա թոռնիկս 5 տարեկան է՝ սպիտակ մազ ունի»:

Դժվար է պատկերացնել, որ Կապանից փախած, ծեծված ադրբեջանցիները և նրանց հետ միասին վրեժի ծարավով հայերի դեմ գրոհած ադրբեջանցիները վրեժը հագեցնելուց հետո քեֆ էին անում: Հապա ու՞ր մնացին «մեքենաները լցված կտրված գլուխները», «կրծքերը կտրված ադրբեջանցի կանայք», «լլկված ադրբեջանուհիները», «մուսուլմանների ազգային պատիվը փրկելու ծարավը»…: «Ազգային պատիվը» փրկողները շատ արագ Սումգայիթի հայերի արյան տեսքից արբեցին և անցան տոնին՝ պատվավոր ադրբեջանցիներին թաղելով էթնիկ ամոթի, նվաստացման ու անարգված մարդկային արժանապատվության բեռի տակ:

Հետագայում միտինգներում «հայերից տառապահար մուսուլմանների» մասին Սումգայիթում մոդելավորված առասպելով հայերի դեմ ամբոխին գրգռելու երևույթը տարածվեց ողջ Ադրբեջանում՝ դառնալով «Նարոդնի ֆրոնտի» կարևոր «հաղթաթուղթը»: Ավելի ուշ Ադրբեջանում «Նարոդնի ֆրոնտի» և ադրբեջանական իշխանությունների, լրատվամիջոցների ջանքերով արագորեն տարածվեց և ամրացավ այն համոզմունքը, որ բռնություն իրականացնողները հիմնականում Հայաստանից գնացած ադրբեջանցիներն են, որոնց միացել են Ադրբեջանի խուլիգանները:

Սումգայիթում առաջին հրապարակային ցույցից անմիջապես հետո ցուցարարները, բարձրաձայն վանկարկելով «Մահ հայերին» կարգախոսը, շարժվեցին դեպի հայերի բնակարանները՝ ճանապարհին համալրելով իրենց շարքերը[9]: Սումգայիթի ցույցի հիմնական կարգախոսներն էին «Հայեր, ռադ եղեք», «Մահ հայերին», «Մեզ հայերի գլուխներն են պետք»: Այս կարգախոսները հետագայում սկսեցին «զարդարել» Ադրբեջանի տարբեր քաղաքներում տեղի ունեցող բոլոր հրապարակային հավաքները և փողոցային երթերը:

1989թ. փետրվարի 29-ին տեղի ունեցած ԽՍՀՄ ԿԿ քաղբյուրոյի նիստին քաղբյուրոյի անդամները պատմում են, թե ինչպես են Սումգայիթում հայերին հետապնդում. Յազով. «Երկու կնոջ կրծքերը կտրել են, մեկի գլուխն են կտրել, մի աղջնակի մաշկը քերթելով հանել են: Ահա այսպիսի վայրենություններ: Որոշ կուրսանտներ դրանք տեսնելով ուշաթափվում էին…»[10]:

ԽՍՀՄ Կենտրոնական Կոմիտեի անդամները, փաստորեն, արդեն գիտեին, որ Սումգայիթում տանջահար անելով երեխաներ են սպանել, սակայն հետագայում տեղի ունեցած դատավարությունն այդ դեպքերը «չբացահայտեց»: Փոխարենը լիովին բացահատեց «Նարոդնի ֆրոնտը», Ադրբեջանի տարբեր քաղաքներում կրկնելով Սումգայիթի դասերը: Հետագայում Բաքվում[11], Կիրովաբադում[12], Շաքիում[13], Նախիջևանում[14], Վարդաշենում, Մինգեչաուրում, Շամխորում, Խանլարում և այլուր պատճենեցին դեպքերի նույն ընթացքը:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՎԱԾՔԸ

Սումգայիթի բոլոր փախստականները պատմում են, որ ոստիկանությունը ոչ միայն չէր փորձում կանխել դեպքերի զարգացումը, պաշտպանել զոհերին, այլև օգնում էր մարդասպաններին ու թալանչիներին:

Սումգայիթյան դատավարությանը մասնակցած ժուռնալիստներն իրենք իրենց շարունակ հարցնում էին՝ ինչպե՞ս էր, որ Սումգայիթի քաղաքային իշխանությունները, իրականում ոչինչ չձեռնարկելով մարդասպանների գործողությունների ընթացքն ու բռնարարքները կասեցնելու, միաժամանակ չէին իրազեկում հայ բնակչությանն իրենց սպառնացող վտանգի մասին, և սրանից անում էին ժուռնալիստական, այժմ արդեն կարելի է ասել՝ հռետորական հետևություն, որ դեռ կապրզվի այդ հանգամանքը: Այդ հանգամանքն այդպես էլ «չպարզվեց», դեպքերի ընթացքում ոչինչ չփոխվեց, և դա պատճառներից մեկն էր, որ Ադրբեջանի այլ բնակավայրերի հայությունը այդպես էլ չկողմնորոշվեց ու չգնահատեց «դեպքերի» լրջության աստիճանը: Նրանց իմացածը մի կողմից միմյանց փոխանցվող լուրերն էին, մյուս կողմից՝ Ադրբեջանի պաշտոնական լրատվության սուղ տեղեկությունները, որոնք համառոտ հայտարարեցին, որ քրեածին տարրերի կողմից Սումգայիթի հայ բնակչության հանդեպ կատարվել են խուլիգանական գործողություններ և իշխանություններն ամեն ինչ անում են դրությունը կայունացնելու: Ադրբեջանի հայ բնակչությունը մտահոգվելու, հուզվելու, անհանգստանալու հիմքեր չունի:

Սումգայիթի մասին խորհրդային լրատվությունը նույնպես պերճախոս լռություն էր պահում: Այդ լռությունը նույնիսկ արդարացվում էր. ,Սովետական մամուլի ավանդույթների մեջ չի տեղավորվում հուզական, հոգին սահմռկեցնող պատմություններ ներկայացնել սպանությունների, բռնաբարությունների, ջարդերի մանրամասների մասին: Լարված իրավիճակում այդ տեղեկությունները վնասից բացի ոչինչ չէին տաե[15]. Սակայն այդ լռությունն «օգնեց» միայն այլ բանի. նախ՝ դաժանությունների տարածմանն ու իրականացնողների «հերոսացմանը», երկրորդ՝ Ադրբեջանի հայերի անպատրաստվածությանը: Իրականում հստակ չպատկերացնելով իրավիճակը և «կախված մնալով» Բաքվի պաշտոնական լրատվության դատարկ հայտարարություններից, թե իրավիճակը կշտկվի, թե իրավիճակի սրողները որոշ քրեածին տարրեր են, և Ադրբեջանի պաշտոնական մարմիններն ամեն ինչ անում են դրությունը կայունացնելու համար, Ադրբեջանի հայերը որևէ գործնական քայլ չէին ձեռնարկում կամ ժամանակին հեռանալու, կամ՝ ինքնապաշտպանվելու համար:

ԵՏՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ԲԱՔՈՒՆ

Ադրբեջանական և խորհրդային իշխանությունների հանցավոր անգործությունը, փաստորեն՝ բռնություն իրականացնողների հետ լուռ համաձայնությունը հանգեցրին նրան, որ սումգայիթյան դեպքերը շատ արագ արձագանքվեցին Ադրբեջանի մյուս քաղաքներում, բայց հատկապես՝ Բաքվում ու Կիրովաբադում: Այստեղի պատվախնդրության ջատագովներն արագորեն արձագանքեցին Սումգայիթի «հերոսների» դատավարությանը և իրենց ցույցերն ուղղորդեցին, նախ՝ «հերոս սումգայիթցիների» պաշտպանությանը, ապա՝ Սումգայիթյան դեպքերի պատճենմանը: Ամենուր տարածվեց միտինգ անելու, «Հայաստանի ադրբեջանցիների անլուր տառապանքների մասին պատմելու», մարդկանց զգայական նուրբ լարերի վրա խաղալով՝ «թշնամի ու բարբարոս», Ադրբեջանում «ադրբեջանցիների հաշվին հարստացած» հայերի դեմ ըմբոստանալու, նրանց բնակարաններն ու գույքը խլելու, Ադրբեջանից հայերին վռնդելու, բայց նախ և առաջ՝ «հայերին սպանելու» կոչերի ալիքը: «Հայերի մահվան» կարգախոսը դարձավ առաջնային և իշխող:

Բաքվի հայերի հանդեպ ագրեսիան շարունակվում էր շուրջ երկու տարի. գրոհները բնակարանների վրա, թալանը, ծեծը տներում և նույնիսկ հասարակական վայրերում /փողոցներում, տրասպորտում/, աշխատավայրերում սովորական երևույթներ էին 1988, բայց հատկապես 1989թ. թվականներին: Քիչ չէին նաև սպանությունների դեպքերը: Խիստ հազվադեպ էր պատահում, որ ոստիկանությունը օգնության հասներ: Փորձով համոզվելով, որ ոստիկաններին և առհասարակ պաշտոնական մարմիններին դիմելն ավելորդ է, նույնիսկ նվաստացուցիչ, հայերը դադարել էին դիմել նրանց: Այսպիսով պաշտոնական մարմիններն ու ոստիկանությունը հանգիստ կարող են պատճառաբանել, որ «իրենք տեղյակ չէին»: Այն սակավ դեպքերում, երբ հայերն, այնուամենայնիվ, դիմում էին, սովորաբար նրանց ասում էին՝ «դիմեք ձեր Զորի Բալայանին», «Սիլվա Կապուտիկյանին», «Վազգենին /կաթողիկոսին/»: Լավագույն դեպքում կոպիտ կամ չեզոք տոնով խորհուրդ էր տրվում շուտ թողնել գնալ, կամ ասվում էր, որ իրենք անզոր են որևէ բան անել: Երբ գործը վերջանում էր սպանությամբ, դիակը չէին տալիս, կամ՝ թաղման թույլտվություն չէին տալիս, մինչև հարազատները գրավոր չհաստատեին, որ սպանվածը մահացել է սեփական մահով /ընկել է, կաթված է ստացել և այլն/: Ոստիկանության բաժանմունքներում չէին գրանցում բռնությունների դիմումները: Սումգայիթի դատավարության գործընթացում, չնայած բուն դատավարության մակարեսայնությանը և կողմնակալությանը, իշխանությունները համոզվեցին, որ «ավելորդ թղթեր են ի հայտ գալիս»: Դրանք այնուհետև դադարեցին: Գործնականում շատ քիչ են եղել դեպքեր, երբ այս կամ այն զոհին տրված մահվան վկայականում նշված է մահվան իրական պատճառը: Մարդկանց աշխատանքից ազատում էին «իր դիմումի համաձայն»: Պաշտոնական մարմինները գործնականում չէին գրանցում բնակարանների փոխանակման փաստաթղթերը: Անկասկած, սրանք իշխանությունների հրահանգի հետևանք էին: Նույնիսկ այն փաստը, որ այսօր նախկին իշխանության ներկայացուցիչները մեկը մյուսի ետեւից բռնությունների մեջ մեղադրում են «նարոդնի ֆրոնտին» և ավելացնում, որ «ոստիկանությունը ոչինչ չէր կարող անել», աղաղակող կեղծիք է: Բոլոր պատմություններում կարմիր թելի նման ձգվում է այն վկայությունը, որ ոստիկանությունը երբեք չփորձեց որևէ կերպ միջամտել դեպքերի ընթացքին կամ միջամտում էր հօգուտ ագրեսորների:

Իզուր կլինի, հավանաբար, Բաքվի արխիվներում փնտրել սպանված կամ բռնությունների, թալանի ենթարկված հայերի թիվը 1988-1990թթ. ընթացքում: Բաքվի Սվերդլովսի փողոցի 5-րդ տանն ապրած Սարկիսովա Մարինան պատմում է. «1989թ. նոյեմբերին երկաթե ձողերով, կացիններով զինված ամբոխը ներխուժեց: Փողոցում շինարարություն կար: Ցանկապատին երկու տղամարդ էին նստած: Նրանցից մեկը՝ ինժեներ Վանյա Ասրիյանը ցատկեց ցանկապատի վրայով, բայց ընկավ: Շինարարական աղյուսով խլխին խփեցին և սպանեցին: Հետո երեք օր դիակը չէին տալիս, որ մարիկ թաղեն: Կինն ասում էր, որ իրենից ստորագրություն են պահանջում այն մասին, որ ամուսինը փողոցում ընկել է և մահացել: Չեն տալիս դիակն ու վերջ: Կինն ստիպված էր այդ թղթի տակ ստորագրել: Մարդիկ ուզում էին իրենց սպանված հարազատների դիակը թաղել, բայց մինչև ազգականները թուղթ չէին ստորագրում բնական մահով մահանալու մասին թղթի տակ՝ դիակը չէին տալիս»:

1988թ. աշնանն արդեն ԲՈՒՀ-երում դասախոսներն իրենց ուսանողներին պատմում էին մտացածին լուրեր՝ իբրև իսկություն, Հայաստանում ադրբեջանցի բնակչության հանդեպ կիրառվող նվաստացուցիչ վերաբերմունքի մասին: Բաքվի Արտասահմանյան լեզուների ինստիտուտի ուսանողուհի Իլոնա Սարկիսյանը, որը Երևան է տեղափոխվել 1988թ. նոյեմբերին, պատմում է. «Գիտե՞ք ինչքան սարսափելի էր 1988թ. դեկտեմբերին: Նստում էինք տանը և վախից դողում էինք: Շատ, շատ սարսափելի էր… Նստում ես տանը, ձայներ էս լսում՝ կարծես թե ինչ որ մեկի վրա հարձակվեցին, գոռոց էս լսում: Պատուհաններից տեսնում ես, որ խմբերով գնում են, արող է քո բախտը բերել՝ քեզ վրա

չհարձակվեն, քո տուն չմտնեն, ուրիշ տուն մտնեն: Եվ մենք բոլորս տանիք էինք բարձրանում, տանիքում թաքնվում էինք: Ընկերուհիս կես տարեկան փոքրիկ բալիկ ուներ, նրա հետ էր բարձրանում: Բարձրանում էինք տանիք, այտեղ սպասում էինք, մինչև փողոցով գոռացող խմբերը անցնեին գնային: Մենք մեզ խաբում էինք, կարծես թե նրանք տանիքում մեզ չէին գտնի, չէին սպանի…Դա 1988թ.-ի ամռանն էր: Հետո դասերն սկսվեցին, աշնանը: Գի՞տեք հետո ինչ էր լինում: Դասախոսը գալիս էր լսարան, օրինակ հենց մեր դասախոսը, մտնում էր լսարան և ինձ նայելով, գիտեր որ հայ եմ, ինձ նայելով հարցնում էր ուսանողներին. «Գիտե՞ք թե Հայաստանում ինչ են անում մեր հայրենակիցների, ադրբեջանցիների հետ: Ամբողջ խումբը հարցնում էր՝ «Ի՞նչ»: Եվ մեր դասախոսը, մեր հոգաբանության դասախոսը ինձ նայելով, ասում էր. «Նրանք ադրբեջանցիներին շարք են կանգնեցնում ու երեսներին թքում են»: Ես դադարեցի դասերին գնալ: Հետո իմ ընկերները՝ ուսանողները զանգում ասում էին «ինչ լավ է, որ չէս եկել: Այնտեղ հայ աղջիկ են բռնաբարել»: Զանգում պատմում էին, որ հայ աղջիկներին ու տղաներին ծեծել են, երեսներին թքում են: Իմ ծանոթ աղջիկներից մեկին՝ Նատաշային փողոց էին դուրս բերել, սկսել էին երեսին թքել, հետո էլ սկսել են ծեծել…»:

Բաքվեցի Հակոբյան ամուսինները Հայաստան են փախել 1988թ., երբ իրենց թաղամասի վրա կատարվել է առաջին գրոհը /Խուտոր ավան, 1-ին շարք, 1-ին անցուղի, 6-րդ տուն/: Պատմում է կինը. «1988 թվականին, Խաղաղության օրը, նրանք /ցուցարարները/ հրապարակից դուրս եկան և սկսեցին գնալ կենտրոնական փողոցներով դեպի վեր, այնտեղ, ուր հայերն են ապրում: Բարձրացան, եկան մեր թաղամասը և սկսեցին ջարդել պատուհանները, դռները, խանութները, վարսավիրանոցները… Այդպես ջարդելով հասան մեր շարքին. մերը փողոցների նման չէր, շարքեր էին՝ միհարկանի ինքնաշեն տներ: Նրանց երկու կողմերից ոստիկաններ էին գնում, իբր որպեսզի չթողնեն մեր վրա հարձակվել: Բայց երբ հասան մեր շարքը, սկսեցին մտնել տները և մարդկանց ծեծել: Չեն նայում՝ կին, տղամարդ…»:

Բաղդասարյան Լիլյան /Բաքու, 8-րդ միկրոշրջան, Կիրովի ավան, 11-րդ տուն, 3-րդ մուտք, 7-րդ հարկ/ ընտանիքի հետ Բաքվից փախել է 1988թ. նոյեմբերի 26-ին, այն բանից հետո, երբ ամբոխը հարձակվել է նրանց տան վրա և փորձել դուռը ջարդել, և ինքը մանկահասակ, հինգ ամսական երեխային ստիպված է եղել ցանցով իջեցնել իրենց հարևանների տուն «մտածեցի՝ ինչ լինում է, թող լինի, գոնե երեխայիս աչքիս առաջ չեն սպանի…»: Լիլյա Բաղդասարյանը երեխային ծննդաբերել էր 1988թ. ամռանը, հունիսի 10-ին, և բժիշկները հրաժարվում էին մոտենալ ծննդկանին. «Երեխայիս ես ծննդաբերել եմ հատակի վրա, բժիշկներն ինձ չէին մոտենում, քանի որ հայ եմ: Ես ցավերի մեջ գոռում էի, խնդրում էի ինձ օգնել, բայց բժիշկները հային չէին մոտենում: Երբ որդիս ծնվեց, հետո երեխային ինձ չէին տալիս, ասում էին թույլ է, դեղնած, չի աճում… Երբ ես սկսեցի լաց լինել, ասում էին, որ պետք չէ աղմկել, պետք է զգույշ լինել, թող չիմանան, որ այստեղ հայ կա…»:

1988թ. աշնանը, նոյեմբերի 17-ին Բաքվում, Բժշկական ինստիտուտի մոտ, օրը ցերեկով հարձակվել են Գրիգորյան Ռաֆիկի վրա /ապրում էր 12-րդ Նագոռնի, 1 նրբանցք, 38 տուն հասցեով/ և ծեծելով՝ մահվան դուռը հասցրել: Բաքվեցի Գրիգորյան Ռաֆիկին տրամվայում տեսել և նրա հայ լինելը վկայել է հենց իր ծանոթը՝ բժշկական ին-տի մի դասախոս. «… Չիլինգարովի գործարանի մոտ, Բժշկական ինստիտուտի մոտ թուրքերը ինձ բռնեցին, ավտոբուսի մեջ էի: Իմ ծանոթներից մեկը՝ թուրք, էդ ավտոբուսի մեջ է լինում, նա դրանց կողմից էր: Ինքը բժշկական ինստիտուտի դասախոս էր: Եկավ ինձ ասեց «դու հայ ես»: Ասեցի «հա, ես հայ եմ, ես չեմ ասում, որ հայ չեմ»: Մի կնիկ էլ կար ավտոբուսի մեջ, նրան ասեցի «ձայն չհանես, որ հայ ես, թե չէ քեզ էլ կսպանեն, թող ինձ սպանեն, դա չխոսես»: Ինձ ավտոբուսից իջացրին: Ասեցի «ի՞նչ եք ուզում», ինձ ասեցին «ուզում ենք քեզ սպանենք, դու հայ ես»:

Ես ասեցի, «Եկեք մարդավարի խոսենք, ինձ ժամանակ տվեք, 2-3 օր, ես կգնամ»: Սկսեցին ծեծել… Արմատուրան վերցրին կոխեցին վզիս մեջ, հետո ճակատիս խփեցին, հետո՝ գլխիս հետևից: Բռնեցին ինձ շպրտեցին, ամեքը մի կողմից սկսեցին թակել, աչքերս շաղվեց: Լապատկեքս սաղ ջարդած ա, ողնաշարս էլ, քայլել չեմ կարողանում: Ինձ ինքնաթիռով բերել են այստեղ՝ Երևան, ճոպանուղու մոտի հիվանդանոցը, պրոֆեսոր վիրաբույժ Զոհրաբյանը վիրահատեց…Մինչև էդ դեպքը մի քանի անգամ եկել էին, պիստալետով, 15 հոգի: Եկել էին իմ ախպոր տուն, 2 հոգի պիստալետով, ման էին գալիս փող, ոսկի, լավ շորեր: Էն մի ախպորս տուն էլ են եկել, տարել: Եկել էին իմ ախպոր կնգան՝ Ասյային, թակել էին գլխին, ուշաթափվել էր: Դե մտնում էին՝ արդեն տունը իրանցն է»: Ռաֆիկ Գրիգորյանի սեփական, երեք հարկանի տունը շատ էր դուր եկել բժշկական ինստիտուտի դասախոսին: Ոչ թե Հայաստանից փախստական ադրբեջանցիների համար, այլ՝ հենց ի՛ր համար:

1988թ. կողոպուտն ու թալանը Բաքվում դեռևս մասսայական ձևեր չէին ընդունել: Ավելի շատ էին հոգեբանական ճնշումները և հայերին սպանելու ու վռնդելու կոչերը: 1988թ. աշնանը Հայաստանից ադրբեջանցիներ էին գնում Բաքու, շրջում էին հայերի տները և առաջարկում փոխանակում կատարել: Հայերի հրաժարվելու դեպքում հաճախ սպառնում էին, որ եթե իրենց առաջարկած պայմաններին չհամաձայնեն, սումգայիթը կկրկնվի Բաքվում և այդ դեպքում նրանք ամբողջովին կկորցնեն իրենց բնակարանները: 1988թ. ամռանից սկսվում և 1989թ. լիովին ընթացք են ստանում հոգեբանական ճնշման տարբեր ձևեր՝ ֆիզիկական ճնշումներին, ծեծին ու սպանություններին զուգահեռ: 1989թ. հոգեբանական բռնության ձևերն արդեն զգալիորեն կատարելագործվել էին: Իլոնա Սարկիսյանը, որ մի տարի Հայաստանում մնալուց հետո մոր ու քրոջ հետ 1989թ. մեկ ամսով գնացել էր Բաքու, պատմում է. «Կամ մեզ էր թվում, կամ իսկապես անընդհատ գոռոցներ էինք լսում: Փողոցով վազում էին ու գոռում: Մենք «հայեր», «Ղարաբաղ» բառն էինք անընդհատ լսում: հետո, գիտե՞ք, շատ վախեցնող տեսք ունեին, գլխին սև ժապավեն կապած… Մեկ ճր, երկու, երեք… Չէինք դիմանում: Ասացի «Մայրիկ, արի ընդմիշտ գնանք, եթե մենք միշտ այսպես լարված նստենք՝ կխելագարվենք: Արի գնանք Հայաստան և այլևս երբեք չվերադառնանք»: Մենք եկանք, ու հենց հաջորդ օրը հարձակվել էին մեր բակի վրա: Մեր բակը կլոր էր, կարծես հրապարակ լիներ: Հարձակվել են, բոլորին ծեծել են, մեկը նույնիսկ սպանվել է: Քեռի Արկադին: Հանգիստ, խաղաղ մարդ էր: Քույր տեսել է, թե նրան ինչպես ծեծելով սպանեցին: Բոլոր ոսկորները ջարդել էին: Նրա կինը՝ Մարթա մորաքույրը քրոջս հետ մտերիմ էր: Նրանց ընտանիքը հետո Ամերիկա գնաց»:

Հայերը հրապարակային միտինգներին չէին լինում և չէին կարող տեսնել հրապարակներում տեղի ունեցածը: Նրանք տեսնում և լսում էին այն կարգախոսները, որոնք գործածվում էին հայորսների ու թալանչիների խմբային գրոհների ժամանակ՝ իրենց ապրած փողոցներում, բակերում, տների պատերին ու դռներին: Նրանց հիշողության մեջ մինչև այսօր մնացել են այդ կարգախոսներից մի քանիսը. ,Հայեր, ռադ եղեք, ռուսները մեր ծառաներն են» /Բաքու, Ջալալյան Ջուլիետա/; «Հայեր, հրեաներ, ռուսներ, ռադ եղեք», – Բաքու, Իսախանյան Էլմիրա/; ,Հայեր, ռադ եղեք, ռուսներ՝ պատրաստվեք» /Բաքու, Գաբրիելյան Վերա/; ,Հայերին սպանել, հայերին մորթելե /Լիանա Խաչատրյան, Բաքու/; ,Մահ հայերին /Անահիտ Մարտիրոսյան, Բաքու/… Բաքվեցի Ղազարյան Ասյան մի անգամ փողոցում հանդիպում է[16] այդ ամբոխին. «Ո՞նց հասա՝ արդեն չեմ էլ հիշում, շատ դժվարություններով…տաքսիից տաքսի էի նստում…խումբ-խումբ հավաքված, դրոշակներով քայլում ու գոռում էին…. ,Մահ հայերին, մահ հայերին, Աթաթուրք!» …մեր դեմ դուրս եկան մզկիթի մոտ, այնտեղ, որտեղ շուկան է.. Քայլում են ու գոռում՝ ,Մահ հայերին, մահ հայերին»: Դրանց դեմքերը սարսափելի էին, ոնց որ ֆանատներ… քայլում էին սումգայիթի մարդասպանների դիմանկարներով՝ «Փառք

Սումգայիթի հերոսներին» էին գոռում: Ասում էին «Ռուսները խոզ են», «Խոզ ռուսներ, հեռացեք, ռադ եղեք», «Մահ հայերին»…»:

Բաքվեցի Էլմիրա Պարսեղովան /Բաքու, 2-րդ միկրոշրջան, Ջաբիևի փողոց, 23, բն.16/ պատմում է. «1988թ. դռների վրա գրած էր. «Էրմանի սան, գեթմալի սան, էվիմ բիզիմդը, շահարի բիզիմդը» («հայ ես՝ գնացող ես, քաղաքն էլ է մերը, տունն էլ): Բաքվեցի Սվետլանա Հարությունյանը /Բաքու Մոնտինո -5, բն. 8-րդ/ պատմում է. «1989թ. նոյեմբերին ինձ մի գրություն են թողել թուրքերեն լեզվով՝ դռան վրա կպցրած. «Սվետա, քոփեյ օղլունու կըզը, սանա ուչ գյուն վախտ վերիրիխ, այար գեթմասան, օզուդ օլմերին, բիլարսան միզա: Ազերբայջան կադընլար» /«Սվետա, շան քած, երեք օր ժամանակ ենք տալիս, եթե չգնաս՝ կտեսնես ով ենք, կսպանենք: Ադրբեջանի կանայք»/:

1989թ. ամռանը ցույցերն էին շատ, բայց աշնանը, հավանաբար հոկտեմբեից, բռնարարքների կոչերն ու բռնարարքները սկսեցին ստանալ զանգվածային բնույթ: Հասարակության կողմից հարգված մարդիկ, եթե նույնիսկ ուղղակի չեն էլ մասնակցել թալանին կամ սպանություններին, հնարավոր բոլոր ձևերով գրգռում էին ցուցարարներին, խանութները հայերին չէին սպասարկում, հիվանդանոցները խուսափում էին հայերին ընդունել…Զանգահարում էին հայերի բնակարանները և սպառնալի հարցնում. «Դուք դեռ այստե՞ղ եք, ռադներնդ քաշեք», «Դուք դեռ չե՞ք գնացել, չե՞ք վախենում» և այլն: Կարելի է փաստել, որ շատ ուսուցիչներ, բժիշկներ, այլ մտավորականներ այս կամ ձևով, ակտիվ կամ պասիվ, մասնակիցն էին հայերի սպանությունների հրահրմանը:

Շատ հայերի սպառնում էին ոչ միայն փողոցում, այլև՝ աշխատատեղերում, առաջարկում էին գնալ Ադրբեջանից, խանութներում մթերք չէին տալիս, դպրոցներում աշակերտներին տրամադրում էին հայ ընկերների դեմ: Աշխատատեղում ծեծում էին: Բաքվից փախստական Ջուլիետա Պետրոսյանը պատմում է. «1988թ. նոյեմբեր ամսին Նախիջևանից ջահել-ջահել աղջկերք են եկել, մեր ցեխում սկսել են աշխատել: Մեր հայ աղջկերքին սկսել են ծեծել էդ ցեխումը, հատակին են գցել մի 10-12 աղջիկ, տղամարդ չէ, է, աղջիկ, ու սկսել են ոտքերով ծեծել: Ես տեսել եմ մի անգամ անցնելուց ու վախելուց վռազ փախել եմ, գնացել իմ կաբինետումը նստել: Մի աղջկա, որ ծեծում էին, մայրը ռուս էր, հայրը հայ էր: Մոր աչքի առաջ ծեծում էին: Մորը չէին ծեծում, միայն աղջկան: Ծեծելիս ասում էին՝ «Դու հայ ես, դու հայ ես…»: Այլոք էլ հայերին կամ առաջարկում էին աշխատանքի չգալ, կամ՝ ուղղակի չէին թողնում աշխավայր, երբեմն էլ հայերին հանձնում էին «Նարոդնի ֆրոնտին»:

Նինա Կուզնեցովան, որի ամուսինն էր հայ, պատմում է. «Որդիս՝ Սաշան ծնվել էր 1988թ., և մենք չէինք կարող շուտ գնալ Բաքվից: Ամուսինս շինարարության վրա էր աշխատում: 89թ.-ի ամռանը նրա պետը «Նարոդնի ֆրոնտին» տեղեկացնում է, որ իրենց մոտ հայ կա: Ամուսինս ոչ հայի է նման, ոչ ադրբեջանցու: Արտաքին տեսքով նրան հայ չէին համարի: Բայց պետը մատնում է, բռնում են, սարսափելի ծեծում են, բոլորը կողերը ջարդել էին: Ամուսինս կարողանում է փախչել, բայց փախչելիս երկու մետրանոց բարձրության ցանկապատից ընկնում է և ողնաշարը ջարդվում է: Երկու ամիս տանը պառկած էր: Դրանից հետո ես նրան չթողեցի տանից դուրս գալ, ես էի աշխատում»:

Հայերը խուսափում էին նաև հիվանդանոցներից, իսկ ծայրահեղ վիճակում հիվանդանոց ընկածները վախենում էին բժիշկներից և բուժանձնակազմից, տագնապում էին, որ իրենց կսպանեն: Հիվանդանոցի վարչակազմը «նարոդնի ֆրոնտի» անդամներին թույլ էր տալիս մտնել հիվանդանոցները և անձագրային ստուգումներ կատարել: Եվ հայերին վախեցնում էին դրանով՝ «չենք կարող ձեզ հիվանդանոց ընդունել, այլապես ի՞նչ կպատասխանենք «նարոդնի ֆրոնտին», երբ նրանք գան հիվանդանոցն ստուգելու»:

Ընդհանրապես «նարոդնի ֆրոնտի» խտացրած «պատրիոտական մթնոլորտը» ստացել էր հանընդհանուր ճանաչում և ընդունվել էր շատերի կողմից. հայատյացությունը, հայերի հանդեպ սպառնալիքները, հայերին արհամարելը և այն ցուցադրելը սկսել էին ընկալվել որպես հայրենասիրություն, իսկ հայ ծեծելը, ավելի լավ է՝ սպանելը սկսել էր ընկալվել որպես հերոսություն: Այնքան խտացած էր հայրենասիրական պարտքը հայասպանությամբ ապացուցելու մթնոլորտը, որ Բաքվում իր ազգությամբ հայ մորն սպանել է տասնչորսամյա պատանին: Անշուշտ բնակչության մեծամասնության համար նորմալ մարդկային հարաբերությունները շարունակում էին գերիշխող մնալ, շատ-շատերը ոչ միայն պահպանել էին իրենց բարյացկամ, նույնիսկ բարեկամական վերաբերմունքը հայերի նկատմամբ, այլև շատ մեծ օգնություն են ցույց տվել իրենց ծանոթներին, երբեմն նաև՝ անծանոթներին: Սակայն ընդհանուր մթնոլորտն այնպիսին էր, որ այս կարգի մարդիկ չէին կարող հրապարակային ցուցադրել իրենց զգացմունքները: «Նարոդնի ֆրոնտը» իր չար ագրեսիվությամբ և գռեհիկ պարզունակությամբ սկզբում վանում էր նորմալ մարդկանց՝ նրանց մեջ արհամարհանք առաջացնելով, հետո արդեն այնքան էր հզորացել, որ ուղղակի վախ էր առաջացնում: Մարդիկ տեսնում էին, որ պաշտոնական մարմինները ոչ միայն չեն զսպում այդ խելագարներին, այլև մի տեսակ հաճույքով հայտարարում էին, որ իրենք անզոր են նրանց դեմ և ուրեմն՝ ռեալ հասարակական իշխանությունը «նարոդնի ֆրոնտինն» է:

Չնայած երկու տարի շարունակ բաքվահայերը աստիճանաբար հեռանում էին քաղաքից ու երկրից, բայց 1989թ. վերջերին դեռևս բավականաչափ հայեր մնացել էին: Հիմնականում անկարող, աղքատ, տարիքով բնակչություն, միայնակ կանայք, կամ՝ կանայք իրենց երեխաների հետ, ազգամիջյան խառն ընտանիքներով մարդիկ: Զգալի թիվ էին կազմում նաև մարդիկ, ովքեր դեռևս հավատում էին, որ այդ քաոսը կվերջանա, կյանքը բնականոն հունի մեջ կմտնի, իրենք կմնան իրենց տներում և քաղաքում: 1989թ. վերջերին, սակայն, դեպքերն սկսեցին զարգանալ խիստ սրնթաց:

Պատմում է Մուրադովա Մարինան, 1939թ. ծնվ., հասցեն Բաքվում՝ Լենինի պողոտա, 146ա, բն.60. /: Մուրադովա Մարինան փորձում է իր բնակարանը փոխանակել, գալիս է Հայաստան, ետ է վարադառնում Բաքու 1989-ի դեկտեմբերն, և ընկնում «Նարոդնի ֆրոնտի» ձեռքը. «Դա 1989թ. դեկտեմբերի 17-ին էր: Մեր տուն թափվեցին 30-40 մարդ, սկսեցին ծեծել: Ամուսնուս /Մուրադով Բորիս/ թկով կապեցին, գլխին կոշիկներով խփում էին, կողերը ջարդեցին, եղբորս /Մարկոսյան Ալեքսանդր/ ջարդեցին՝ արյունլվիկ արեցին, մեծ դանակներով էին…Հետո սկսցին թալանը: Մենք պատշամբով անցանք հարևանի պատշգամբը, այնտեղից անցանք չորրորդ հարկ, Հայաստանից եկած մի ադրբեջանցու տուն: Լավ մարդ էր: Այնտեղից զանգեցինք մեր ազգականին, նա ադրբեջանցի փեսա ունի, որպեսզի ադրբեջանցի փեսան գա մեր հետևից: Բայց նա վախեցավ գալ: Հարևանուհին տաքսի կանգնեցրեց, մեզ ճանապարհեց: Ես ոտկանատուն գնացի, բայց այնտեղ ոչոին, ոչինչ չարեցին, նույնիսկ մեզ ձեռ առան: «Գնացեք,-ասացին,-զգույշ եղեք մեքենայի տակ չընկնեք, մեքենայի ճանապարհով չգնաք»: Մի կերպ Վրաստան գնացող գնացքի տոմս առանք: Կայարանում ահավոր բան էր կատարվում, բոլորը փախչում էին, մեկը մյուսի առաջն էր ընկնում… Սարսափելի էր: Կայարանում լիքը բանդիտներ կային, աչքիս բոլորը մեր տուն լցված բանդիտներն էին թվում: Ամուսինս, որ մինչ այդ շատ անվախ էր, վախից դողացնում էր. «Գնանք, շուտ գնանք, մեզ բնակարան պետք չի, մեզ ոչինչ պետք չի, շուտ փախչենք այստեղից»: Առողջ, ուժեք ամուսինս կաթված ստացավ»:

Բռնություններն այնքան զանգվածային դարձան, որ նույնիսկ ամենաանհավատ բաքվահայերը հասկացան, որ իրենց մնալն այլևս անհնար է և հարկավոր է ամեն ջանք գործադրել «դուրս պրծնելու»: Առջևում դեռևս ամենաահավորն էր՝ 1990թ. «սև հունվարը»:

ԲԱՔՎԱՀԱՅԵՐԸ

Բաքվահայությունը, ինչպես առհասարակ «բաքվեցին» մինչև «դեպքերը» հատուկ խումբ էր: Գոնե՝ իրենց ինքնապատկերացումներում: Սումգայիթն, իհարկե, շատերին ցնցեց: Թվում է, որ այն անակնկալ էր նաև Ադրբեջանի քաղաքացիների համար. դժվար էր այդ օրերին դեռևս հասկանալ այն անսահման ատելությունն ու թշնամանքը, որ արտահայտվել է ադրբեջանցիների որոշ խմբերի կողմից հայերի նկատմամբ: Ե՞րբ է այն հասցրել այդքան կուտակվել և ո՞րն էր պատճառը: Այսօր արդեն, իհարկե, շատ պարզունակ է Սումգայիթում տեղի ունեցածը ներկայացնել որպես սոցիալական ճնշվածության պոռթկում, ինչպես սովորաբար արվում է: Սումգայիթում /հետագայում՝ նաև Բաքվում, Կիրովաբադում…/ իրական կատարվածի վերլուծությունը այլևայլ խորքեր է ի հայտ բերում: Տվյալ դեպքում ձևակերպենք մեկ հարց. կա՞ր արդյոք Ադրբեջանում կուտակված ատելություն և թշնամանք հայերի նկատմամբ: Կարծում եմ բաքվեցի Լիանա Խաչատրյանի պատմությունը կարող է բացել այս հարցադրման պատասխանի հնարավորությունը: Լիանան պատմում է, իրենք դեռ անտեղյակ էին Սումգայիթում կատարվածին, երբ իր տալը՝ ամուսնու քույրը եկավ Սումգայիթից, որտեղ նրա ընտանիքը և բնակարանը, ի թիվս այլ հայերի, նույնպես ենթարկվել էր խուժանի գրոհին: Փետրվարին վերջին տալը իր երեխայի հետ գալիս է Բաքու և ծեծում Լիանայենց դուռը: Նրա պատմությունից ցնցված Լիանան նետվում է զանգելու կիսուրին՝ տուժած Մարթայի մորը. «Կեսուրս տարիներ շարունակ պոլիկլինակայում էր աշխատում, այդ թաղամասում բոլորը նրան գիտեին: Ես զանգեցի պոլիկլինկա և խնդրեցի Զոյա Խաչատրյանին:Հեռախոսի մյուս ծայրից մի կին պատասխանեց. «Հըմ, հըմ, Սումագյիթում հայերին մորթում են, իսկ այս հայը, տեսեք, լկտիություն ունի զանգել և մի ուրիշ հայի հեռախոսի մոտ խնդրել»: Սա 1988թ. փետրվարի վերջին էր: Բաքվի առողջապահական հիմնարկում աշխատող, ըստ երևույթին միանգամայն նորմալ կինը խիստ բնական է համարել, որ սումգայիթում հայերին ջարդելուց հետո հայերն Ադրբեջանում այնքան պետք է խեղճացած և վախեցած լինեին, որ նույնիսկ… հեռախոսով միմյանց հարցնելու քաջություն չունենային:
Այս կարգի բազմաթիվ փաստերը շատ հարցերի պատասխան են տալիս: Մինչդեռ հայերի, մասնավորապես բաքվահայերի մտքով անգամ չէր անցնում, նույնիսկ մինչև այսօր, որ իրենք այդքան անցանկալի են/էին: Համարյա բոլոր բաքվահայերն իրենց հիշողությունները փորփրելիս չեն գտնում այն փաստարկները, որոնք կարող են բացատրել սույն, իրենց համար անբացատրելի երևույթը: Շատ-շատերն են ասում, որ իրենք հիանալի հարաբերությունների ունեին ադրբեջանցիների հետ, որ միմյանց սիրում և հարգում էին, երբևէ առիթ չեն ունեցել կասկածելու իրենց գոյության անցանկալիությանը, ընդհակառակն՝ ադրբեջանցիներից շատերը հայերին սիրում և գնահատում էին… Հենց այս համոզմունքը հայերին Սումգայիթից հետո երկու տարի պահեց Բաքվում: Բաքվում հնարավոր բոլոր ձևերով՝ ցույցերով, սպանություններով, ծեծերով, հեռուստաեկրաններից ասում, հասկացնում էին, որ իրենք անցանկալի են և թշնամի են համարվում, իրենք «մահվան են դատապարտված», իսկ հայերի զգալի մասը համառորեն… չէր հասկանում այդ հայտարարությունները: Ապրում էին վախեցած, զգուշորեն, աշխատում էին տնից քիչ դուրս գալ կամ առհասարակ դուրս չգալ, չգրգռել «տերերին», բայց… չէին հեռանում: Համենայն դեպս՝ մեծ մասը: Այսօր Բաքվից փախստական հայերը զանազան ձևով պատճառաբանում են իրենց դուրս չգալը. «Սովետը կար, ո՞վ կհավատար, որ զոռով դուրս կհանեն» /բայց ախր ամեն օր էին զոռով դուրս հանում և Սովետի գործոնը չէր աշխատում/, «Մեր հարևանների հետ շատ լավ էինք, իրենք մեզ համոզում էին, որ ոչինչ չի լինի, կանցնի, մի գնացեք» /բայց չէր անցնում, և այդպես ասող հարևաններն իրենք վախեցած էին/, «աշխատատեղում ինձ շատ էին գնահատում և համոզում էին չգնալ» /բայց աշխատատեղերում հենց նույն մարդիկ ի վերջո առաջարկեցին գնալ, փրկվել, իսկ այլ աշխատատեղերում իրենք էին կազմակերպում ծեծն ու դուրս շպրտելը/, «Ուզում էինք տունը վաճառել կամ փոխանակել՝ նոր» /բայց արդեն ակնհայտ էր, որ ամեն

ինչ արվում է, որ հայերը չկարողանան տունը վաճառել, այդպես էլ մնալու է, ինչու թուրքական փողեր տան/… Իրականում այս պատճառաբանություններին հենց իրենք էլ չեն հավատում: Հայերն սպասում էին… հրաշքի… ինքն իրեն կհարթվի, կանցնի, կմոռացվի… կամ՝ սպասում էին սովետական բանակին: Բայց այդ բանակը Սումգայիթում ուշացել էր, Կիրովաբադում այն ոչ թե հայերին էր պաշտպանում, այլ ադրբեջանցիներին՝ անհայտ է ումից, իսկ Բաքվում բանակը կար, ամեն օր տարբեր թաղամասերում ահավոր դեպքեր էին լինում, և բանակը ոչնչով չէր օգնում զոհերին: Հայերն այս ամենը գիտեին և հենց իրենք էլ պատմում են: Ինչի՞ էին սպասում նրանք, երբ իրականում գիտեին իրենց սպասելիքների սնանկությունը, և ոչ իրենք իրենց պաշտպանության կազմակերպման համար էին որևէ քայլ անում, ոչ՝ Բաքվից հեռանալու /ճիշտ է, ընտանիքներն ու անհատները առանձին-առանձին, երբ և ինչպես կարողանում էին, գնում էին, ոմանք՝ Հայաստան, այլոք՝ Ռուսաստան, Ուկրաինա, ԱՄՆ…/: Ինչի՞ էին սպասում և ամեն օր լսում ևս մեկի, մի քանիսի սպանության, թալանի, ծեծվելու… մասին, ամեն օր տեսնում ցույցերը և լսում այդ ցույցերին հնչող կարգախոսները՝ «մահ հայերին», «մահ հայերին»…Ամեն օր նայում պատուհանից դուրս և հանդիպում «մահ հայերին» բառերին, ստանում նամակներ՝ նույն բովանդակությամբ ու պահանջով, ահով սպասում դռան ծեծելուն… Բաքվեցի Ադելա Ստեփանյանն այսօր պատմում է. «Ես մինչև այսօր չեմ կարողանում նորմալ քնել, չեմ կարողանում երեխաների, հարևանների հետ նորմալ խոսել: Ես սկսում եմ ճչալ: մենք ապրում էինք Բաքվի կենտրոնում, Բաիլովյան բանտի մոտ /Խանլարի փողոց, 52/, ամեն ինչ մեր աչքի առաջ էր, և մենք ամեն օր ինքներս մեզ պահակ էինք՝ դռան առաջ բենզինի շիշ, նավթ, ժավել, դանակ… եթե հանկարծ հարձակվեին: Մենք չէին քնում, նույնիսկ հաց գնելու չէինք գնում, ռուս տատիկներին խնդրում էինք մեզ համար հաց գնել»: Բաքվեցի Մերի Հարությունովա. «Դուք գիտե՞ք ինչ է նշանակում վախենալ: Դա ամենասարսափելի զգացումն է: Երբ եկանք Հայաստան, ես մի քանի տարի ամեն գիշեր երազ էի տեսնում, որ հարձակվել են թուրքերը… Եկել են ինձ սպանելու…Արթնանում էի քրտինքի մեջ կորած: Ես այստեղ թոշակս ստացել էի, հետո ամեն գիշեր երազում այդ բանդիտները գալիս էին թոշակիս ետևից… Դուք չգիտեք, թե ինչ է վախը: Դա ամենասարսափելի բանն է»: «Շատ չէինք խոսում տունը, որ չիմանան, որ տունը մարդ կա…»,-ասում են շատ բաքվահայեր:

Ադրբեջանում «ժողովրդին» առաջնորդողները և ինքը՝ առաջնորդվող «ժողովուրդը» սկզբից մինչև վերջ երբեք չթաքցրեց, որ իրենց գաղափարախոսությունը, իրենց գործունեությունը ուղղված է հայերին սպանելուն, խոշտանգելուն, թալանելուն: Բաքվեցի Լիանա Խաչատրյանը, Բաքվից փախչելով 1988թ. աշնանը, ամեն օր լսելով ու տեսնելով այդ կոչերն ու ցույցերը, համոզված պատմում է. «Նրանք երբեք չէին թաքցնում, որ գնում են սպանելու: Նրանց բոլոր ասածները այդ էր՝ սպանել, մորթել… Անցնում էին փողոցով՝ մեր տների տակով, և պլակատներ էին տանում՝ սպանել, հայերին սպանել…Դա այնքան բնական էին ասում»:

Ինչի՞ հետ էին, ուրեմն, հույս կապում բաքվահայերը:

Կարծում եմ կա բացատրության մի ամբողջ շարք: Առաջինը և ամենատարածվածը՝ Բաքվի հայերը կարծում էին, որ իրենք իրենք անգնահատելի մասնագետներ են և ադրբեջանցիները գիտեն ու հասկանում են, որ առանց հայերի իրենք մեծ դժվարություններ կունենան: Հայերի սոցիալական կարգավիճակի այս ինքնագնահատականը կամ ինքնակարծիքը սնուցվում էր այն դրական վերաբերմունքով, որին նրանք հաճախ էին հանդիպել համատեղ խնջույքների, տոնակատարությունների… ժամանակ /խնջույքներում հնչած կենացների, փախադարձ հաճոյախոսությունների/: Համարյա մեր բոլոր պատմողները սիրում են կրկնել, թե իբրև Ադրբեջանի Կենտկոմի քարտուղար Վեզիրովն ասել է, որ հայերի գնալով ու Հայաստանի ադրբեջանցիների Բաքու

գալով իրենք կորցնում են «ոսկի ձեռքեր և ստանում ոսկի ատամներ»: ՈՒրեմն եթե իրենք «ոսկի ձեռքեր են», դեռ կգնահատեն իրենց, կհասկանան, որ իրենց՝ հայերին կորցնելով Ադրբեջանը աղքատանում է,-վստահ էին Բաքվի հայերը: Նույնիսկ այն հանգամանքը, որ Վեզիրովին ադրբեջանցիները «հայասեր» անվանեցին և նրա դեմ եղած ընբոստությունների հետևանքով նրան ազատեցին աշխատանքից, Բաքվի հայերին չսթափեցրեց: «Մենք լավն ենք, կրթված ենք, բարեկիրթ ենք, և ադրբեջանցիները գիտեն այդ մասին»,-ահա այս ինքնակարծիքը խանգարեց հայերին սթափ գնահատել իրավիճակը և միջոցներ փնտրել իրենց կյանքը փրկելու: Երկրորդ՝ հայերը հատկապես Բաքվում հավատացել էին լրատվամիջոցների ձևավորած այն տեղեկություններին, որ ագրեսիվ գործողություններն իրականացնողները Հայաստանից գնացած և Ադրբեջանում, հատկապես Բաքվում չսիրված «թուրքերն» են՝ ԵՐԱՋ-ները /Երևանի ազրբեջանցիները/, և որպես այդպիսին իրենք՝ հայերը դաշնակից ունեն տեղաբնիկ ադրբեջանցիներին: Երրորդ՝ հայերի մի մասը Բավքում սկսում էր վարժվել անընդհատ հնչող սպառնալիքներին և պատրանքներով հույսեր կապել՝ լսելով ընկեր, ծանոթ և հարևան ադրբեջանցիների՝ գուցե և մեղքի զգացումից, բայց նաև համոզմունքից թելադրված հանգստացնող խոսքերը, անհրաժեշտության դեպքում պաշտպանելու խոստումները /այս խոստումների մեծ մասը բոլոր հնարավոր իրավիճակներում իրականացվել է/: Չորրորդ՝ ընտանիքները կիսվել էին. մի մասը մնացել էր «պահակ» և «պատանդ» Բաքվում, մյուս մասը տեղափոխվելու հնարավորություններ էր փնտրում գոնե մասամբ ընդունելի պայմաններով, հինգերորդ՝ մարդիկ բացարձակապես որևէ տեղ չունեին գնալու: Շատերը խոստովանում են, որ Հայաստանի 1988. դեկտեմբերի աղետալի երկրաշարժից հետո իրենք հասկանում էին, որ Հայաստանն ինքը ծանր կացության մեջ է, և Հայաստան տեղափոխվել առանց բնակարանի փոխանակման անիմաստ է, իսկ թուրքերն այլևս բնակարանափոխության որևէ ընդունելի առաջարկի չէին համաձայնվում:

Նյութերը վկայում են, որ իրենց դեմ ունենալով խիստ կազմակերպված «Նարոդնի ֆրոնտը» և, փաստորեն, Ադրբեջանի գործող իշխանությունների համաձայնությունը «Նարոդնի ֆրոնտին», հայերը, հատկապես Բաքվում, չեն էլ փորձել ինքնակազմակերպվել, բանակցել իշխանությունների կամ նույն «Նարոդնի ֆրոնտի» հետ, կամ՝ ինքնապաշտպանություն կազմակերպել: Զարմանալի հյետևողականությամբ յուրաքանչյուրն իր համար էր լուծումներ փնտրում, եթե առհասարակ որևէ լուծում փնտրում էր: Հնարավո՞ր է արդյոք այս երևույթը բացատրել հայերի էթնիկ խառնվածքին երբեմն տրվող ինքնաբնորոշմամբ /«մենք անհատապաշտ ենք», «մենք անհատական ենք»…/: Բայց ա՞յս աստիճան «անհատական», «անհատապաշտ»: Այս իմաստով ուշագրավ է, որ բաքվեցի փախստական մեր զրուցակիցները երբևէ որևէ ձևով չանդրադարձան Ադրբեջանի գյուղերի հայաթափությանը՝ 1988թ. աշնանը, և Կիրովաբադի ջարդերին ու ինքնապաշտպանությանը, արդյունքում՝ հայաթափությանը: Բաքվի հայերի պատմություններում իսպառ բացակայում է Ադրբեջանի տարածքի մյուս հայկական բնակչության հանդեպ մտահոգությունը և նրանց ճակատագրի հետ իրենց կապը, բացի Սումգայիթից: Սումգայիթի հետ կապն էլ այն է, որ այս քաղաքում եղածը գնահատվում է որպես ազդանշան: 1988թ. Կիրովաբադի ջարդերն ու ինքնապաշտպանությունը կարծեք թե որևէ չափով չի մնացել բաքվեցիների հիշողություններում: Համենայն դեպս եթե հատուկ հարց չի լինում, նրանք իրենց պատմություններում այդ դեպքերին չեն անդրադառնում:

Հիրավի, Բաքվի հայերն իրենք իրենց ադրբեջանահայության մաս չէին գիտակցում: Իրենք բաքվեցի էին, և բաքվեցին ազգություն չուներ: Բոլոր բաքվեցիները նույնն են՝ առանց ազգային պատկանելության, չնայած նրանց ամեն օր տարբեր ձևերով հիշեցնում էին, որ իրենք ոչ թե «բաքվեցի են», այլ «հայ են», և որ «հայերը դատապարտված են»: Բաքվահայերը սիրում էին իրենց ինքնակարծիքի բաքվահայերի կարգավիճակը, և բոլորովին չէին ըմբռնում, որ կարող է այլ կարծիք

լիներ հայերի մասին: Այն, ինչ կատարվում էր Բաքվում, կատարվում էր, ըստ նրանց ընկալման, Բաքու աշխարհագրական տարածքում, ոչ թե Բաքու սոցիալ-մշակութային ու էթնիկական միջավայրում: Շատ շատերի գիտակցության մեջ Բաքվում երկու-երեք տարի մոլեգնող «նարոդնի ֆրոնտը» բաքվեցիների հետ կապ չուներ: Այս համոզմունքը հաստատուն է հատկապես Բաքվի կենտրոնական մասերում ապրած հայերի մեջ: Ծայրամասի բնակիչներն ավելի «կենդանի» հիշողություններ ունեն. նրանք «լսել և տեսել են», թե ինչպես էին հայերի դեմ բորբոքում մտավորականները հեռուստացույցով, ինչպես էին հերոսականացնում հայերին սպանողներին, թալանողներին… Ուշագրավ է, որ բոլոր բաքվեցիներն են պատմում պաշտոնական մարմինների թողտվության, «նարոդնի ֆրոնտի» հանդեպ, մեղմ ասած, չեզոքության մասին, այն մասին, որ ավելորդ էր դիմել պաշտոնական մարմիններին, ոստիկանությանը, ամեն ինչ որոշում էր «նարոդնի ֆրոնտը», բայց երբեք և ոչ մեկը դրանից հետևություն չի արել: Նրանց պատմություններում սովորաբար հարց չի հնչում՝ ինչու՞ փողոցում օրը ցերեկով կատարվող սպանության, դաժան ծեծերի և նույնիսկ հասարակական վայրում՝ քաղաքային այգում բռնաբարության դեպքերին ոստիկանությունը չի միջամտում: Ավելին, ինչու՞ զոհերը չեն դիմել ոստիկանությանը: Բոլորը լուռ հասկանում էին իրավիճակը, բայց նույնիսկ մինչև այսօր շատերը այդ իրավիճակը գնահատում են ստանդարտ, արդեն ձևակերպված, ֆորմուլային գնահատականներով՝ «ամեն ինչ նարոդնի ֆրոնտի ձեռքին էր», «ոստիկաններն անզոր էին», «իշխանությունը չէր կարող», սիրելի և հարազատ Բաքուն փչացավ «երազների՝ ոսկի ատամների գալով», «գյուղացիները լցվեցին քաղաք և փչացրին»: Կարծում եմ մասնակիորեն այս հանգամանքով կարելի է բացատրել այն պարադոքսալ փաստը, որ հայատյացության խտացող մթնոլորտը և անգամ ֆիզիկական վտանգը հայերին չմղեցին միմյանց հետ միավորվելու, քննարկելու, ստեղծված իրավիճակից լուծումներ փնտրելու: Նույնիսկ մեկ շենքում ապրող երկու կամ ավելի հայ ընտանիքները չսերտացրին իրենց հարաբերությունները: Ինքնապաշտպանության ծրագիր չմշակեցին: **Եվ սա պատճառներից մեկն է, որ հայերը իրազեկված չէին Բաքվում զարգացող իրական, կոնկրետ հայահալածությանը.** միմյանց տեղեկացնում էին ազգականները, և ազգակցական խմբերը տեղյակ են հիմնականում իրենց խմբի անդամի հետ կատարված դեպքերին: Եվ երբ սպառնալիքը վեր էր ածվում գործողության՝ յուրաքանչյուրը մենակ էր: Ինչպես ամեն ընտանիք առանձին լուծում էր փնտրում փախչելու, փոխանակելու, հեռանալու, այնպես յուրաքանչյուր մարդ, ընտանիք… լուծում էր փնտրում իր հետ կատարված բռնությունից կամ բռնության դեմ… Չկար նույնիկս մի փոքր խումբ, որ բանակցեր իշխանությունների կամ նույն նարոդնի ֆրոնտի հետ, փորձեր հարց կարգավորել, խնդիր լուծել… Եվ երբ, օրինակ, փողոցում կնոջ ու երեխայի աչքի առաջ մորթում էին ամուսնուն ու հորը, կնոջը՝ Անահիտ Մարտիրոսյանին բաժին ընկավ ինքն իր վրեժը լուծելու՝ ինքն իրեն հանձնարարած առաքելությունը: Բաքվում այրիացած կինը Հայաստան հասնելուց հետո գնաց Ղարաբաղի պատերազմին մասնակցելու:

Ադրբեջանցիների քանակական մեծամասնությունը, գուցե, լուռ համաձայն էր հայերի հեռանալուն Ադրբեջանից, բայց, անկասկած, դատապարտում էր ոհմակային հայատյացությունը և հատկապես բռնությունները: Բացի պարզ մարդասիրությունից, շատերն ակնհայտորեն հասկանում էին դրանց հետևանքներն իրենց ժողովրդի նկարագրի վրա: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ Ադրբեջանը այդ տարիներին լքել են ադրբեջանցիներ՝ իրենց ապրելն այդ այլասերված միջավայրում անհնար համարելով: Դեպքերի կոնկրետ ադրբեջանցի ականատեսներից հայտնի են ծանր հոգեբանական ազդեցության կրողներ:

«ՍԵՎ ՀՈՒՆՎԱՐ»

Նախորդ երկու տարիների անպատիժ սպանություններն ու թալանը, հայերի դիմադրության բացակայության ակնհայտությունը, արյամբ արբեցած և հայերի գույքով հարստանալու արդեն բոլորովին բացահայտ ծրագրերը, հայատյացության խորապես արմատացած մթնոլորտը և, հատկապես, դաժանության ու արյան մոլուցքի խտացած կրքերին հագուրդ տալու անզուսպ պահանջը հասունացրին 1990թ. հունվարը:

Բաքվում մնացած հայերն արդեն ամենաանկարողներն էին կամ՝ բռնությունների այդպիսի ալիքի հանդեպ ամենաանհավատները, ինչպես նաև ադրբեջանցիների հետ ամուսնացած մարդիկ: Պատմում է Սարկիսովա Մարինան /Բաքու, Արսեն Ամիրյանի փողոց, 28 տուն, 28 բն./. «Ես պատուհանից տեսա, որ գալիս է սև ժապավենները ճակատներին կապած ամբոխը: Տեսա, ինչպես ծերերին հանեցին տներից և սկսեցին ծեծել: Զանգում եմ ոստիկանություն, ինձ ասում են «զանգեք ձեր Բալայանին, ձեր Կապուտիկյանին: Հարևանուհուս տնից հանել են արդեն գիտակցությունը կորցրած, հենց այդ վիճակում էլ սկսել են ծեծել՝ քացիներով: Նրան հիվանդանոց են տարել և ինքը մինչև հիմա չգիտի, թե ով է իրեն փրկել: Նրանք երեք քույր էին, քույրերից մեկի վրա էլ էին հարձակվել: Նրանց հետո տեղափոխեցին լաստանավ, լաստանավից հետո ուղիղ հիվանդանոց են տարել: Նրանք լրիվ այլանդակված էին, մարմնի, դեմքի վրա ոչ մի չջարդված տեղ չէր մնացել: Քույրերից մեկը մահացավ Հայաստան հասնելուց հետո... Մեր՝ 4-րդ պոլիկլինիկայում մի կին էր աշխատում, 74 տարեկան էր, Շուշան էր անունը: Նա աշխատանքի էր գնում տրամվայով: Տրամվայում տեսնում է, որ մի 18 տարեկան հայ աղջկա ծեծում են հենց տրամվայում, մոտենում է, որ օգնի: Հարձակվում են իր վրա, տրամվայի մի քանի կանգառի ընթացքում ծեծում են, հետո մի պուրակի մոտ իջեցնում են տրամվայից: Պուրակ են տանում 74 տարեկան կնոջը, բռնաբարում են, հետո սպանում են: Կրծքի վրա լրիվ հանգցրած ծխախոտի հետքեր էին: Նրա աղջիկը՝ Ժասմենը այստեղ է, Հայաստանում: Մոր մահվան ժամանակ էլ այստեղ էր: Հետո Ժասմենի ամուսինը գնաց և այլևս մինչև այսօր նրանից լուր չկա: Իսկ Շուշանն այնքան բարի կին էր, բոլորին օգնում էր: Վերցրին ու սպանեցին: Դրանից առաջ էլ մի հայ բժշկուհու գլուխն էին կտրել, հենց իր տանը»:

Պարսեղովա Էլմիրան ոչ մի կերպ չէր կարողանում պատմել իր հետ պատահածը: Նա մեզ տվեց իր գրավոր հայտարարությունը, որն արել էր Հայաստանում.

Հայկական ԽՍՀ փախստականների գծով պետական կոմիտեի նախագահ Գ.Ազատյանին նախկինում Բաքվի 2-րդ միկրոշրջանի Ջաբիևի փողոցի 23 տան 16 բնակարանի բնակիչ Է.Պարսեղովայից

Հայտարարություն

1990թ. հունվարի 11-ին գիշերը մեր բնակարան են ներխուժել մարդկանց մի խումբ, զինված քարերով, տախտակներով, երկաթե ձողերով, հարձակվել են ինձ ու մորս՝ 1923թ. ծնված Վառվառա Հարությունյանի վրա, գազանաբար ծեծել են, մորս գլուխը հատակին էին խփում, քացիներով՝ փորին, խփում էին երկաթե ձողերով, փայտերով... Մեզ կսպանեին, բայց մեր հարևանները գիշերը մեզ իրենց տուն տարան: Հաջորդ օրը, հունվարի 12-ին, գնացել ենք օդանավակայան, բայց հենց որ մտանք սպասասրահ, մեզ շրջապատեցին և ուզում էին սպանել: Ոստիկանությունը մոտեցավ, բայց այդ պահին «Նարոնդի ֆրոնտի» ներկայացուցիչները եկան և մեր անձնագրերը պահանջեցին: Ոստիկանները մեզ հանձնեցին նրանց: Մեզ մեքենա նստեցրին և տարան քաղաքի ծայրամաս; Մեզ ասացին, որ մենք պատանդ ենք: Տարան հանրակացարանի մի սենյակ, որտեղ մեր իրերը դատարկեցին, բոլոր արշեքավոր բաները վերցրին, մեզ մերկացրին... երեք-չորս ժամ ծեծում էին, թքում էին դեմքերիս... ջարդում էին ձեռքներս... Հետո գիշերը մեքենա նստեցրին և ետ տարան օդանավակայան: Մեզ

այնտեղ չթողեցին ինքնաթիռ նստել: Մի կերպ ետ ենք վերադարձել մեր թալանված, դուռը ջարդած բնակարանը, թաքնվել ենք հարևանների տանը: Հունվարի 13-ն մեր հարևաններն իրենք են մեքենա վարձել և մեզ ուղարկել են Դերբենդ-Մախաչկալա: Այստեղից մեզ ուղարկել են Կրասնոդար, որտեղ մենք առաջին բժշկական օգնությունն ենք ստացել…»:

Տարօրինակ է, բայց հայերին վռնդել փափագող «Նարոդնի ֆրոնտի» ջարդարարներն ամեն ինչ անում էին, որ հայերը Բաքվից չփախչեն,-հսկում էին կայարանները, ավտոճանապարհները, կանգնեցնում էին մեքենաները և գնացքներում ստուգում էին ուղևորների անձնագրերը՝ հայ էին փնտրում: Գտնելու դեպքում իջեցնում էին և սպանում: Ուրեմն ինչպե՞ս մարդիկ Բաքուն ազատեին իրենց ներկայությունից:

Պատմում է Կուզնեցովա Նինան. «Հունվարի 5-ին ես ամուսնուս մի կերպ ճանապարհեցի: Երկու տարի կարում էի, փող էի վաստակում, որ գնանք այնտեղից: Հունվարի 14-ին մեծ դժվարությամբ ուղարկեցի նաև տալոջս և որդուս՝ երկու տարեկան Սաշային: Հարևաններս անընդհատ ասում էին, որ Սաշան հայ է, թող կորչի, թե չէ կսպանեն: Ես, ճիշտ է, ազատ փողոց էի դուրս գալիս, բայց երեխայիս չէի կարող հետս դուրս տանել կամ տանը թողնել: Հետո եկան «նարոդնի ֆրոնտի» խիզախներն ու ասացին, որ եթե մի անգամ էլ Սաշային տեսնեն՝ կտոր-կտոր կանեն. «Նա հայ է, նա իրավունք չունի այստեղ մնալու»: Ես գնացքի տոմս գնեցի մինչև Գիորգիևսկ, ես այնտեղ ազգականներ ունեմ, և տալոջս հետ /Եդիգարովա Նոնա, նա հիմա Սևանում է ապրում/ գնացք նստեցրի: Ես կուպեի տոմս էի վերցրել, նույն կուպեում մի տղա կար, ես նրան խնդրեցի, աղաչեցի հետևել, որ երեխային չվնասեն: Երեխայի անուն ազգանունը, հասցեն գրեցի, գրպանում դրեցի, որ հետո, կորչելու դեպքում, կարողանամ գտնել: Շատ, շատ վախենալու էր: Սումգայիթի մոտ ինչ որ մի կիսակայարանում գնացք են մտել այդ բանդիտները և սկսել են բոլոր ուղևորների անձնագրերը ստուգել: Տալս երեխայի հետ թաքնվել է վերևում, իրերի հետևում: Եվ այնտեղից պատուհանից տեսել է, թե ինչպես են գնացքից հանված հայերին՝ երեխաներին, ծերերին, կանանց հավաքել ու հենց գնացքի կառամատույցում այրել: Տալս իր աչքով է տեսել: Իսկ իրենք ուղղակի հրաշքով փրկվել են:

Իսկ ես գնացի հունվարի 17-ին, նույնպես Բաքու-Մոսկվա գնացքով: Բաքվի կայարանում ինչ որ կանայք կային, որ հարձակվում էին հայերի վրա: Ես արդեն վագոնում էի, տեսնեմ մի խումբ «Ահա, հայեր են» գոռալով վազեցին: Եվ կանայք, և երիտասարդ տղաներ էին, վազեցին այդ մարդկանց կողմը: Գնացքն արդեն շարժվում էր, տեսնեմ՝ մի մեքենա էր մոտենում կայարանին, հենց այդպես տեղից էլ շրջվեցին, որ ետ վերադառնան: Չգիտեմ՝ կարողացա՞ն, թե ոչ: Ես նույնիսկ զարմացա, կայարանում ռուս զինվորներ կային, վահաններով զինվորներ էին, նրանք տեսնում էին, որ մարդկանց սպանում են, բայց մի քայլ անգամ չարեցին, տեղներից չշարժվեցին: Ախր տեսնում էին»:

Բաքվեցի Սվետա Հարությունյանի պատմածից. «Մեզ լաստանավով տարան Կրասնովոդսկ, հետո ինքնաթիռով՝ Երևան: Էդ որ Կրասնովոդսկից եկանք, մի հատ կնիկ շատ լացում էր, բայց ինքը ռուս էր: Ու զարմանալի էր, որ ինքը սամալյոտի[17] մեջ էդքան լացում ա: Մենք հարցրինք «դու ռուս ես, ինչի՞ համար ես էդքան լացում»: Ասեց «ես իմ ամուսնուց բաժանված եմ մի 30 տարի առաջ, բայց ԺԷԿ-ից իմացել են, որ իմ ամուսինը հայ ա եղել, եկել են: Իմ մերը 15 տարի ա կաթվածահար տունը պառկած էր»: Իրա մորը թողել են տունը, իրան խաբել են, թե քեզ ԺԷԿ-ից կանչում են, ինքը դուրս ա եկել, տեսել ա, որ իրա մորը պատշգամբից դուրս են շպրտել իրա աչքի առաջ: Դրա համար ինքը մինչև Երևան էլ լացում էր, Ծաղկաձորից հետո ես իրան չտեսա, էլ չիմացա ինչ եղավ: Հեչ չէր հանգստանում, ասում էր «գոնե ես անցնեի, հետո գցեին, ես մինչև դուրս եկա, մորս բալկոնից գցեցին»:

Դեպքերի այս ընթացքը շարունակվեց մինչև հունվարի 19-ը, երբ քաղաքում այլևս հայ չգտնող «հրոսները» շրջապատեցին Ադրբեջանական իշխանությունների գրասենյակները և Մոսկվան գտավ, որ անհրաժեշտ է միջամտել դեպքերի ընթացքին: Թույլ չտալու իշխանափոխություն: Հայերի խնդիրն այլևս լուծված էր: Իրականում Բաքվում մինչև հիմա նույն իշխանությունն է, ինչ կար մինչև 1990թ.:

Այսպիսով, «Նարոդնի ֆրոնտի» զոհերի՝ հայերի պատմությունները վկայում են, որ այս շարժման հեղինակներն ու հետևորդները թե իրենց գործողություններում, թե կարագախոսներում «ազատության» խնդիր համենայն դեպս մինչև 1990 թվականը չեն ձևակերպել: Նրանց համալրողը հայերին Ադրբեջանից վտարելու, սպանելու, նրանց գույքը թալանելու, նրանց բնակարաններին տիրանալու մղումներն էին, նրանց գործողությունները՝ ագրեսիան, խոշտանգումները, սպանությունները, թալանը: Արյունահեղությունը: Նյութերը վկայում են, որ ողջ 1988-1990թթ. Բաքվում «նարոդնի ֆրոնտը» իր հետևորդներին մղում էր հայերին կողոպտելու, թալանելու, սպանելու: Ընդ որում՝ բաց, առանց երկդիմությունների, այլաբանությունների: Իսկ երբ խոսում էին հռետորները, ամենաբարձր հնչող բառը «մահն էր»: «Նարոդնի ֆրոնտի» հրապարակի այս մշակույթն այնուհետև ալիքավորվում էր և տարածվում նախ՝ Բաքվում, ապա՝ ողջ Ադրբեջանում: Ներքին կապանքներից ազատված մարդկանց այս խմբերը սոցիալական վրեժ էին լուծում, դա սոցիալական ստորակարգված շերտի ճնշված բնազդների բացահայտումն էր: Ինքնին Ղարաբաղի պաշտպանության գաղափարն ի զորու չէր էթնիկապես լիովին չկազմավորված, «թրքության», «մուսուլմանության», «ադրբեջանության» հատվածներով հանդես եկող, միմյանց հետ մշակութապես և նույնիսկ պատմականորեն չկապված, սոցիալապես հակոտնյա մարդկանց հավաքականություն դարձնել: Եվ չդարձրեց: «Նարոդնի ֆրոնտը» դարձավ նրանց մի մասի՝ «մուսուլմանների» հավաքականության խարիսխը:

Այնուամենայնիվ «ազատության» խնդիր այստեղ կարող ենք դիտարկել. դա ադրբեջանցիների մի հատվածի՝ ներքին բարդույթների մի մասից ազատվելու գիտակցված կամ չգիտակցված խնդիրն էր: Եթե այդ շրջանի ադրբեջանցիներին պայմանականորեն բաժանենք երկու խմբի, ապա «նարոդնի ֆրոնտի» ակտիվ մասը բաղկացած էր ադրբեջանցիների՝ էթնիկապես և սոցիալապես չկայացած շերտերից: Այս շերտը, որն էլ հենց օգտագործում էր «մուսուլման» բառը որպես էթնանուն, սոցիալական կայացման խնդիրը լուծում էր՝ վրեժ հանելով իրենց պատկերացմամբ սոցիալական գերակայություն ունեցող հայերից, որոնց ինքնին գոյությունը վիրավորում էր նրանց էթնիկական պատիվը: Նրանք չէին կարող «Ղարաբաղը պաշտպանելու» ձևակերպմամբ ընդդիմություն լինել իրենց արհամարհող ադրբեջանական էլիտայից: Ահա և հրապարակ նետվեց ստոր, թշնամի, հարուստ հայերից վրեժ լուծելու միջոցով իրենց էթնիկ պատիվը վերականգնելու գաղափարը:

«Նարոդնի ֆրոնտի» անդամները և նրա կողմից ղեկավարվող շարժման հետևորդները, ստորին սոցիալական շերտերի մարդիկ, ներշնչված էին իրենց «ազգային պատվի» վերականգնման առաքելությամբ: Նրանց ղեկավարների կողմից շարունակ հաստատվում էր, որ իրենց «ազգային պատիվը» ստորակարգված է հայերի սոցիալական բարձրակարգությամբ, Բաքվի և այլ քաղաքների հայերի բարեկեցիկ կյանքով և, իհարկե, հայերի և ադրբեջանցիների պատմական անցյալի դերակատարումների վերաբերյալ գիտական-մտավորական այրերի կողմից ամբոխին մատուցված մեկնաբանություններով: Հարկավոր էր «վերականգնել այդ անարդարությունը», որի ուղղակի միջոց էր դիտվում հայերին նվաստացնելը, նրանց գույքը թալանելը, բայց նախ և առաջ՝ վրեժը: Եվ չնայած այդ վրեժի ձևավորումն արտաքուստ խարսխվում էր Հայաստանի ադրբեջանցիների հանդեպ հայերի

իրականացրած բռնությունների մտացածին պատմությունների վրա, իրականում այն արտածված էր հենց իրենց՝ «նարոդնի ֆրոնտի» առաջնորդների, հետևորդների ու բռնություններն իրականացնողների ապրած կյանքի զգայական նվաստացումներից. նվաստացում իրենց հայրենիքի, իրենց ապրած երկրի պատմության, մշակույթի կերտման մեջ հայերի ունեցած դերի ընկալումից, նվաստացում իրենց հայրենիքում ապրող հայերի քաղաքակիրթ սոցիալական միջավայրից: Հենց այդ պատճառով «նարոդնի ֆրոնտի» կարգախոսները միանգամայն ուղղաձիգ և բաց էին. «մահ հայերին», «ծարավ ենք հայերի գլուխներին», «հայերի գլուխներն ենք ուզում», «հայերին վռնդել, սպանել և տիրանալ նրանց գույքին, բնակարաններին»:

Նյութերի վերլուծությունը թույլ է տալիս վարկածային ենթադրություն անել, որ «Նարոդնի ֆրոնտի» գործողությունները տանում էին ադրբեջանցիների էթնիկ ինքնահաստատման չավարտված գործընթացի ավարտին: «Նարոդնի ֆրոնտի» ծրագիրը և գործողությունները ոչ թե իշխանափոխության, հասարակական կարգի փոփոխության, «ազատության» ծրագիր էր, այլ՝ մուսուլման-ադրբեջանցիներին հայերի էթնիկ գերազանցության սինդրոմից, բարդույթից ազատելու: Սա հաստատվում է թեկուզ և «նարոդնի ֆրոնտի» կարգախոսներով և նրա հետևորդների ողջ վարքով: Հայերի քաղաքակրթական գերազանցության մասին կուտակված բարդույթն էր, որ բռնարարքներին հաղորդում էր հատուկ դաժանություն: Կարելի է ենթադրել, որ սա ձևակերպված ծրագիր չէր, սակայն սոցիալական մի շերտի համար ընկալելի մակարդակում էթնիկ համախմբան միջոց դառնալով՝ դարձավ ծրագիր: Դեպքերի ընթացքը հաստատեց մուսուլման-ադրբեջանցիների զգալի մասի հոտային բնազդի միջոցով մոբիլիզացման մեծ պոտենցիալը: Ադրբեջանական հավաքական կամքն արագ համախմբվեց «առաջնորդի» ձևակերպված և հաստատուն կամքի պարագայում՝ առանց լուրջ հարցականների, առարկությունների, խուսափումների, երկվությունների:

Նյութերը վկայում են, որ «հայերի գերազանցության բարդույթը» չունեցող հատկապես բաքվեցի «մտավորական էլիտար» ադրբեջանցիները գործնականում չմիացան «նարոդնի ֆրոնտի» ոչ գաղափարախոսությանը, ոչ գործողություններին: Ընդհակառակն, նրանք վիրավորված էին իրենց էթնիկ նկարագրի իրենց ինքնապատկերացումներն ստորակարգող գործողություններից, և անհատապես փորձում էին շտկել իրավիճակը: Սակայն իշխանություններն ակտիվ կամ պասիվ խրախուսում էին «նարոդնի ֆրոնտին» և չգտնվեց այն քաղաքական առաջնորդը, որի շուրջ խմբավորվեին սոցիալապես հաստատված ադրբեջանցիները: Նրանց ինքնությունը համախմբողը «ադրբեջանությունն» էր, ոչ թե «մուսուլմանությունը»: Իսկ «ադրբեջանությունը» զգալի չափով երկատված կամ, նույնիսկ, եռատված էր. մի մասը «թուրք ադրբեջանցի էր», մի մասը՝ «աղվան ադրբեջանցի», երրորդ մասը՝ «սովետական ադրբեջանցի»: «Ադրբեջանությունը» գլխավորապես ռուսախոս էր: Այս շերտում «մուսուլմանությունը» ինքնության երկրորդ, երբեմն՝ երրորդ տեղում էր, ի տարբերություն մուսուլման-ադրբեջանցիների, որոնց համար երկրորդ տեղում էր «ադրբեջանությունը»: Վերջիններս այս էթնանունը նույնիսկ միտինգներում քիչ էին գործածում: «Ադրբեջանության» կրողները «հեռու» էին «մուսուլման ադրբեջանության» կրողներից և, իրենց հերթին բարդույթավորում էին «մուսուլման ադրբեջանությանը»: «Ադրբեջանության կրողները» հայերի մոտ ամեն կերպ ցուցադրում էին, որ իրենք «մուսուլման ադրբեջանության» ակտիվ շերտին՝ «Նարոդնի ֆրոնտին» վերաբերում են արհամարանքով, դատապարտում են նրանց: Այդ ցուցադրությունը, սակայն, հրապարակային չէր և հավաքական քաղաքական կամք չդարձավ, ինչպես նաև հետագայում որևէ դեր չխաղաց ոչ բռնությունների ընթացքում, ոչ հետագայում՝ Ադրբեջանի իշխանության ձևավորումներում: Նրանց մոբիլիզացման թուլությունը հավանաբար պայմանավորված էր

Ղարաբաղյան հարցի հանդեպ «Նարոդնի ֆրոնտի» դիրքորոշման հետ համաձայնությամբ: Սակայն հրապարակի վրա չկար «ադրբեջանության» գաղափարախոսությունը:

---

[1] Գոլոս Արմենիի, 2007, հունվարի 13:

[2] Изгнание бакинских армян: мнение председателя КГБ Азербайджана Вагифа Гусейнова, “Московский комсомолец”, 06.02. 2004, Михаил Ростовский.

[3] ***"Зеркало " թերթ, 21 февраля 2003г.***

[4] Ուշագրավ է, որ Ադրբեջանի Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Վագիֆ Հուսեյինովը նույնիսկ 2004թ., և 1988թ. գլխավոր դատախազ Իլյաս Իսմայիլովը՝ '2003թ. դեռևս չեն գիտակցում եթե ոչ մարդկային, ապա գոնե իրենց պաշտոնական պատասխանատվությունը:

[5] Սումգայիթցի Արեգ Հակոբյանը պատմում է, որ երբ իրենց հայտնի դարձավ Ղարաբաղի ինքնորոշման պահանջը և ոմանք զգուշացնում էին, որ դա կարող է վատ հետևանքներ ունենալ իրենց համար, մտածում էին «հա, դե Ղարաբաղը թող ուզի, ինքը չի ուզում ենթարկվի Ազերբայջանին, իրա հողն է, ղարաբաղցին ինչ ուզում ա թող անի, մեր հետ ի՞նչ կապ ունի էտ, մենք հո չե՞նք ասում՝ Սումգայիթը մերն է՝ տվեք մեզ: Ձերն է՝ թող ձեզ մնա»:

[6] Հետագայում Հայաստանից Ադրբեջան «փախած» և Սումգայիթի հայկական ջարդերում դեր խաղացած ադրբեջանցիների թեման շատ է քննարկվել: Առավել ամբողջական այդ մասին տես **Воеводский Константин, Перестройка в Карабахском зеркале, Опыт сравнительного анализа, Журнал ,Pro Armeniaե N 1, 1993.** Հեղինական այդ մասին գրում է. «Դեռ մինչև Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի որոշումը Հայաստանի՝ Ադրբեջանի հետ սահմանակից Կապանի շրջան ուղարկվեց զինվորականների մի խումբ, որպես «Մոսկվա հասած ահազանգի» հետքերով միջոցառում՝ կանխելու հայերի կողմից փետրվարի 20-ին նախատեսվող ադրբեջանցիների կոտորածը... Փետրվարի 26-ին Կապան եկավ գեներալ Ալբերտ Մակաշովը... Ստուգումները պատրաստվող անկարգությունների հետքեր չհայտնաբերեցին: Ի հայտ եկավ միայն երկու իրավախախտում. ադրբեջանական դպրոցներից մեկի հրկիզման փորձ դպրոցի տնօրեն ադրբեջանցու կողմից, և Երևան-Կապան գնացքի վրա հարձակում: Փորձագետները նույնիսկ Կապանի շրջանի ադրբեջանցիների արտագաղթի վերլուծություն արեցին: Որևէ հատկանշական բան չարձանագրվեց, եթե չհաշվենք փետրվարի 27-ին գնացքով Կապանից միանգամից երկու հարյուր ադրբեջանցիների մեկնումը Բաքու: Այս մարդիկ պնդում էին, որ իրենք մեկնել են Ադրբեջանում ապրող իենց ազգականների հորդորով»: Ուշագրավ է, որ Կապանից գնացած երկուհարյուր առեղծվածային ադրբեջանցի ընտանիքներն, այնուամենայնիվ, գնացել են փետրվարի 27-ին, իսկ Սումգայիթյան միտինգում Հայաստանից «փախստական, տառապահար ադրբեջանցիների» մասին հայտարարվել է փետրվարի 26-ին: Սակայն փետրվարի վերջերին Հայաստանում դեռևս չգիտեին այս երևույթի մասին, որն ինքնին ըստ ամենայնի լուրջ դեր է խաղացել դեպքերի հետագա զարգացումներում և դեռևս կարիք ունի առանձին հետազոտության: Այնուամենայնիվ արժի ավելացնել, որ Կապանում ադրբեջանցիների հանդեպ որևէ կարգի բռնության բացակայությունը հաստատած ստուգումների արդյունքների մասին մարտի սկզբին հայտարարվել է հեռուստատեսությամբ և նույնիսկ հրատարակվել է մամուլով (О.Кулиш, Д.Меликов, "Черным семенам

не прорасти" - "Социалистическая индустрия", 27.3.88). Այնուամենայնիվ ոչ ոք չէր խանգարում կամ առարկում հետագայում միտինգներում «Կապանում խոշտանգումների ենթարկված ադրբեջանցիների» ելույթները կամ հռետորների ելույթներում այդ թեմայի զարգացումները:

[7] Քանի որ հայերն առհասարակ, ադրբեջանահայերը մասնավորապես ադրբեջանցիների մասին խոսելիս գործածում են «թուրք» բառը, տիկին Էմման իր պատմությունը պատմելիս օգտագործում է «թուրքեր» բառը: Իրականում «Նարոդնի ֆրոնտի» թե հռետորների, թե համակիրների զգալի մասն օգտագործում էր «մուսուլմաններ» բառը: Այս ավանդույթը վավերացվել է նաև Սումգայիթի բռնարարքների դատավարության նյութերով: Առհասարակ ադրբեջանցիների զգալի մասը, հատկապես ստորին սոցիալական շերտերը, իրենք իրենց էթնիկության մասին խոսելիս գործածում են «մուսուլման» բառը, ընդ որում «մուսուլման» բառի գործնական օգտագործման մեջ դրված է ոչ թե կրոնական, այլ էթնիկ պատկանելության իմաստ, այսինքն՝ այն օգտագործվում է որպես էթնանուն:

[8] Սումգայիթցի Արեգ Հակոբյանը նույնիսկ զրուցավարի հետևողական հարցերին այն մասին, թե արդյոք Ղարաբաղի պատճառով չեն իրենց՝ հայերի դեմ դուրս եկել ցուցարարները, միշտ պնդում էր. “Չէ, Ղարաբաղի անուն չկար, ասում էին «հայերը պիտի դուրս գան ստեղից: **Ավելի շուտ, ոչ թե պիտի դուրս գան, այլ սաղին պիտի սպանենք»:**

[9] «,..Դրոշը ձեռքերին անցան մեր տան մոտով: Դրոշին գրված էր «Մահ հայերին»: 22-րդ դպրոցի մոտ նրանց միացան դպրոցականներ: Ճիշտ է՝ որոշ դպրոցականներ մնացին: Կես ժամվա ընթացքում 40-50 հոգիանոց խումբը դարձավ 5-6 հազարանոց ամբոխ: Եվ այդպես «Մահ հայերին» գոռալով նրանք շրջում էին ողջ շրջանով մեկ, ստուգում էին բոլոր մեքենաները, ավտոբուսները, մարդկանց դուրս էին հանում»,- Александр Василевский, Туча в горах, ,Аврора, № 10, 1988.

Սումգայիթցի Գրիգորյանների պատմածը. / Նարիմանովի փողոց, 4/21 տուն, 23 բնակարան/. «…. Մեր շենքի առաջը փողոց ա, փողոցի էն կողմն էլ շուկան ա՝ Սումգայիթի մեծ շուկան: Նայում եմ, տեսնում եմ՝ գնում են, գալիս են, գնում են, գալիս են, լրիվ ջահել-ջահել տղերք, կին, երեխա չկար: Գալիս էին, իրենց լեզվով անպատվում էին: «Մահ հայերին…հայերի հերը»:

Սումգայիթցի մեկ եղբայր և երկու քույր Շադյանների պատմածը. “Թուրքերը որ գնում էին, կրկնում էին՝ «էրմյանի սան, օլմյանի սան»՝ «հայ ես, պիտի մեռնես», կրկնում էին “Օլդուրըն էրմենլարե” /Սպանեք հայերին/, “Կոյ բիր դա նաֆար կալմա սըն”/թող ոչ մի շունչ չմնա/, “Օլդուրըն, օլդուրըն”/Սպանեք, սպանեք/… “Կորչեն հայերը!”, “Կոտորեցեք, սպանեցեք”… Իշխանյան Սերգեյի փեսային՝ Միշային սպանել են, չնայած շատ մտերիմ էր թուրքերի հետ: Թուրքերեն էր խոսում: Մտել են տունը, մի գեղեցկուհի աղջիկ ուներ՝ 14 տարեկան, բռնաբարել են, կնոջը բռնաբարել, իրան էլ նախ ձեռքերն են կոտրել, հետո ոտքերն են կոտրել, քիթը, աչքերը… Հիմա կինը աղջկա հետ գնացել է Ամերիկա…

/Շադյանների սումգայիթյան հասցեները՝ քաղաք Սումգայիթ, 30-րդ թաղամաս, տուն 7/8, բն. 7; Լենինի փողոց, 19 թաղանաս, տուն 24/5, բն. 31; Թամարայի հասցեն՝ 36 թաղամաս, տուն 22, բն. 65:

[10] Խորհրդային միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի 29.02.88թ. նիստի արձանագրությունից, ամսագիր **"Родина" № 4, 1994 թ., էջ. 82-90**

[11] Բաքվեցի Մերի Հարությունովան, Լիլիա Բաղդասարյանը և այլոք պատմում են սև ժապավենների վրա "մահ հայերին» կարգախոսով պտտվող խմբերի և միտինգավորների մասին:

[12] Հակոբյաններ՝ Հայկուշ, 1936թ. թ. Եգոր, 1935թ., Կարինե, 1961թ.,Սերգեյ, 1963թ., Կիրովաբադ, Նարիմանովի փողոց, 29 շենք, 25 բն; Հովհաննիսյան Ռոզա Զաքարի

1948թ., Կիրովաբադ, ՄՈչցՎÿվ 34, 7-Տռ ՍՉՈՐՑՈս, 4-Ոÿ ՍՉՈՐՑՌՐՈ; Հարությունովներ՝ Սեդա, 1935թ., Կարեն, 1932թ., Ռոզա, 1965թ.Գևորգ, Կիրովաբադ

Բուլվարնայա - 50 /1988թ. նոյեմբերի 30-ին դուրս ենք եկել: Էս երկուսը /երեխաները/ գրկիս, միլիցեքը մտան, ասեցին «յա տունը թողում ես, յա քո վիզդ կտրում ենք» ու ցույց տվին/; Շախլամովներ Կամո, 1960թ., և Էլյա, 1963թ., Կիրովաբադ

Բագրատ Ալիևի փ. - 5, բն. 2, /«1988թ.նոյեմբերի 20-ն էր, ցույց ա անցել Կիրովաբադում, թուրք տղեքը, ինձ ասեցին, որ ցույցում որոշել են, որ սաղ հայությունը մինչև ամսի 25-ը պետք ա դուրս գա Կիրովաբադից» նոյեմբերի 23-ին... մեր վեշերը հանեցին, կեսը վառին, կեսը հարևանները թալանեցին: 1989թ. մարտին Կիրովաբադից դուրս եկանք/;

[13] Գասպարյան Ելենա Գրիգորի, ք. Շաքի, Ձերժինսկի փ. , փակուղի 3, տ. 3. «1988թ. ...նոյեմբերի 21-ից 26-ը, չորս-հինգ օրվա մեջ մենք արդեն տեղափոխվեցինք»: /եկել են տնից հանել, մի քանի օր մնացել են «խրամատներում», հետո միանգամից՝ ավտոբուս:

[14] ***Գևորգյան Լենա,*** Գևորգյան Աղուն, Նախիջևան, գյուղ Զնաբերդ. «88 թ. նոյեմբերի 2-ին...թուրքերը հարձակվեցին... փախել ենք սարերը... գիշերը մնացել ենք; Հաջորդ օրը...եկել ենք... Մեկը բարուրի էրեխան ա գրկած փախնում, մեկը... Փախած օրը մեկի խմորն էր վաննայի մեջ մնացել, մեկի հացն էր թոնրում մնացել, մեկի ղավուրման էր թոնրում մնացել... Հենց մեկը ես՝ խաշացուս կեսը խաշած էր մնացել, կեսը հենց նենց ոտ ու գլուխ պադվալում... Ղավուրման չլցրած դույլի մեջը ... »; «...թուրքի կնիկը, էրեխին գրկած, մտել էր մեր տունը, ամուսնուս ասել էր. «Շուտ դուս արի տնիցը, թե չէ էրեխուս կմորթեմ, կասեմ հայն է արել»:

[15],Аргументы и фактыե, 1988, № 16.

[16] Քանի որ հայերը վախենում էին փողոց դուրս գալ, նրանք ցուցարարներին ավելի շատ տեսնում էին իրենց բնակարանների պատուհաններից և լսում նրանց ձայները:

[17] самолет - ինքնաթիռ